Azg Ազգ

1 ՄԱՐՏ 2013 ՈՒՐԲԱԹ 29(5112)

ISSN: 1829-1651

Մասնակցե՞լ, թե՞ չմասնակցել դասադուլի

Յուրաքանչյուր մարդու իրավունքները վերջանում են այնտեղ, երբ սկսվում են ոտնահարվել մյուսների իրավունքները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Դասադուլ» արտահայտությունը մեր իրականության մեջ մտավ 1988-ին՝ նախ բնապահպանական շարժման, ապա ղարաբաղյան շարժման հետ: Այն ժամանակվա ուսանողներիս համար դասադուլը բողոքի եւ պայքարի ձեւ էր Արցախի մեր հայրենակիցների ինքնորոշման իրավունքի պաշտպանության համար՝ ընդդեմ Խորհրդային Միության անարդար քաղաքականության:

Ի՞նչ նպատակ է հետապնդում դասադուլն արդեն անկախ Հայաստանում: Ներկայումս դասադուլի դիմում են քաղաքական այս կամ այն ուժի ներկայացուցիչները, ձգտելով իրենց կողմը գրավել հասարակության ամենաակտիվ եւ զգայուն խավին՝ ուսանողությանը: Նման փորձ 2008-ին կատարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը, որը, կարելի է ասել, տաղալվեց, քանի որ որպես այդպիսին դասադուլ չեղավ: Նախկին նախագահի ղեկավարած քաղաքական ուժի կոչին արձագանքեցին, լավագույն դեպքում, մի քանի հարյուր ուսանողներ: Ինչը նորմալ կարելի է համարել, քանի որ չի կարող լինել այնպես, որ բոլոր ուսանողները, միահամուռ, ինչպես 1988-ին էր, հանդես գային նույն տեսակետով: Ժամանակներն այլ են, դասադուլով լուծվելիք խնդիրները՝ նույնպես:



Տես էջ 3

The New York Times. «Արեւմուտքը զիջումներ արեց Իրանին»

«Նյու Յորք թայմս» թերթը հաղորդում է, որ ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ 5 երկրների եւ Գերմանիայի հետ Ղազախստանի Ալմաթի քաղաքում Իրանի պատվիրակության անցկացրած բանակցությունների հերթական փուլը ավարտվել է իրանցիների միջուկային ծրագրի հարցում Արեւմուտքի պետություններին որոշակի զիջումներով:

ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը եւ Չինաստանը հրաժարվել են այն պահանջից, որ Իրանը վերջնականապես փակի Ֆորդոյում գտնվող ուրանի հարստացման գործարանը: Դրա փոխարեն իրանցիներին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել, որոնք թույլ չեն տա ուրանի հարստացումը հասցնել 20 տոկոսից բարձր մակարդակի:

Մեկ ուրիշ զիջում դարձավ այն համաձայնությունը, ըստ որի իրանցիների դրական քայլերի դեպքում կվերացվի ոչ միայն քաղաքացիական օդանավերի պահեստամասերի մատակարարման, այլեւ ոսկու եւ մյուս թանկարժեք մետաղների առեւտրի վրա սահմանված արգելքը:

Բանակցություններում Իրանի ներկայացուցիչ Սաիդ Ջալիլին «Մեծ վեցյակի» դիրքորոշման մեջ տեղի ունեցած փոփոխությունները համարել է դրական, ընդգծելով, որ նոր պահանջները առավել իրատեսական են: Միեւնույն ժամանակ Արեւմուտքի երկրների դիվանագետները իրավիճակը մեկնաբանել են բավական հոռետեսորեն:

Թերթը մեջբերում է դիվանագետների խոսքեր, որոնց համաձայն Իրանը այդպես էլ չի պատասխանել իրեն արված առաջարկությանը, եւ որ «սակարկությունը նույնիսկ չի էլ սկսվել»: Եվրոպացի դիվանագետները նշում են, որ Իրանը կարող է մարտին Ստամբուլում կայանալիք բանակցությունների հաջորդ փուլում անել հանդիպական առաջարկություն, «ուսելով առաջարկված քաղցրաբլիթը եւ փոխարենը ոչինչ չտալով»:

Իսրայելում կտրուկ հակազդել են այն տեղեկություններին, որ Արեւմուտքը միջուկային հարցում զիջումներ է արել Իրանին: Վարչապետ Բենիամին Նաթանյահուն կասկածներ է հայտնել, թե հնարավոր է Իրանի միջուկային խնդիրը լուծել դիվանագիտական միջոցներով: Նա արտահայտվել է ռազմական պատժամիջոցների անհրաժեշտության օգտին:

Արմավիրի քաղաքապետի հրաժարականի դիմումը մերժվեց

Կառավարությունը երեկ մերժեց Արմավիրի քաղաքապետ Ռուբեն Խլղաթյանի հրաժարականի դիմումը: Ներկայացնելով այս հարցը՝ տարածքային կառավարման նախարարի տեղակալ **Վաչե Տերտերյանն** ասաց, որ նախարարությունը աշխատանքային քննարկումներ եւ զրույց է ունեցել Արմավիրի քաղաքապետի հետ՝ պարզելու հրաժարականի ներկայացման դրդապատճառները: Ըստ այդմ, արձանագրվել է, որ դրդապատճառները «անձնական են եւ զուտ էմոցիոնալ հարթության վրա»: Նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպես նաեւ այն փաստը, որ Արմավիրի քաղաքապետը ընտրվել է 2011-ի մարտի 20-ին, եւ դեռեւս չի լրացել նրա պաշտոնավարման նույնիսկ կեսը, ինչպես նաեւ, որ Արմավիրում ծրագրեր են իրականացվում՝ առաջարկվեց մերժել հրաժարականը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը սա ճիշտ մոտեցում համարեց, ասելով, որ հրաժարականները չպետք է պայմանավորված լինեն քաղաքական գործընթացներով:

ՀՀԿ-ն, «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն բանակցում են

Մեկ օր առաջ «Ժառանգության» եւ ՀՅԴ խմբակցությունների անունից Ռուբեն Հակոբյանն ու Արմեն Ռուստամյանը Ազգային ժողովի նախագահին էին ներկայացրել մի փաստաթուղթ, որի առաջարկները պետք է դառնան հետընտրական զարգացումների վերաբերյալ հրավիրվելիք արտահերթ նիստի՝ այս քաղաքական ուժերի առաջարկած օրակարգը: ՀՀԿ-ն պետք է դա քննարկի ու իր տեսակետը հայտնի: Այստեղ երեք պահանջ կա՝ ընտրական օրենսգրքի փոփոխություն, 1 տարվա ընթացքում արտահերթ խորհրդարանական ընտրություններ, 2 տարվա ընթացքում՝ երկրի կառավարման խորհրդարանական համակարգի անցնելու համար սահմանադրական հանրաքվեի անցկացում, վերահսկողական լծակների տրամադրում ընդդիմությանը:

Երեկ Ազգային ժողովի նախագահի մոտ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի եւ ՀՅԴ-ի ներկայացուցիչները քննարկում էին արտահերթ նիստի հավանականության եւ այդ առաջարկների հետ կապված հարցեր, սակայն երբ բանակցություններն ավարտվեցին, քննարման մասնակիցները որեւէ բան չասացին այդ քննարկումների բովանդակության մասին:

Արմեն Ռուստամյանը նշեց, որ բանակցությունները շարունակվում են, ինքն ուրիշ ասելիք չունի, քանի դեռ բանակցությունները արդյունքի չեն հասել: Համաձայնության հնարավորություն կա երեք կետերի շուրջը, դրանք քննարկվելու են այնքան, մինչեւ եզրահանգման հասնեն:

Տես էջ 2

Ատոմ Գիզիրյանի հրաժարականի դիմումն ընդունվեց

Կառավարության որոշմամբ Ատոմ Գիզիրյանն իր դիմումի համաձայն ազատվել է Շիրակի մարզպետի պաշտոնից: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** այս կապակցությամբ նշեց, որ Ատոմ Գիզիրյանը սեփական նախաձեռնությամբ է պաշտոնից ազատվելու դիմում ներկայացրել: Վարչապետն ընդունել է նրան եւ համոզվել, որ այս մասին տարատեսակ տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում: Տիգրան Սարգսյանը նաեւ շնորհակալություն է հայտնել Ատոմ Գիզիրյանին կատարած աշխատանքի համար:

Ստուգումներ «Երեւանի ոսկերչական գործարանում»՝ սեփականաշնորհումից առաջ

Հիմք ընդունելով «Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի 2011-ի ֆինանսական արդյունքները՝ կառավարությունը երեկ որոշեց թույլատրել բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը՝ այն համապատասխանեցնելով 2011-ի տարեվերջի դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքին: Որոշման նախագծի քննարկման ժամանակ նշելով, որ պետական մասնակցությունն ընկերությունում 80 տոկոս է, վարչապետ Տիգրան Սարգսյանն արծարծել է ձեռնարկության սեփականաշնորհման հարցը: Նա պետեկամուտների կոմիտեին հանձնարարել է իրականացնել ընկերության համալիր ստուգում, որպեսզի ճշտորեն որոշվի նրա շուկայական գինը՝ սեփականաշնորհումն արդյունավետ իրականացնելու նպատակով: Վարչապետն առաջարկել է քննարկել նաեւ ընկերության բաժնետոմսերը բորսայի միջոցով վաճառելու հնարավորությունը:

Ա. Մ.

Մարտի 2-ին Ռաֆֆին կտա «բոլոր հարցերի» պատասխանը

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ասված տա, որ դուք մեզ առաջնորդեք»: Մինչ ընդդիմության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը հարթակ էր բարձրանում, դիմացը կանգնած մի քանի տարեցներ անընդհատ բղավում էին ու դրոշները թափահարում: Հետո նրանք վարդերի մի հսկայական փունջ նվիրեցին Հովհաննիսյանին՝ ցանկությամբ, որ նա օր առաջ ղեկավարի երկիրը:

«Նոր Հայաստան է եկել, իշխանությունները դա հասկացել են, իսկ Ռաֆֆի Հովհաննիսյանի վերջին մի քանի օրվա մարզային այցելությունների ժամանակ՝ համոզվել», հայտարարեց «Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ **Արմեն Մարտիրոսյանը**՝ հարցնելով հավաքված բազմությանը՝ «Հզոր քայլերով գնում ենք դեպի հաղթանակ, չէ՞», «Բարեւի հեղափոխություն ենք անում, չէ՞», ինչին բազմությունը պատասխանում էր «հաղթանակ» վանկարկումներով: Այնուհետեւ հանրահավաքին միացան բանակում խաղաղ պայմաններում զոհված զինվորների մայրերը: Սեւազգեստ մայրերը բարձրացրել էին իրենց որդիների լուսանկարները՝ հայտարարությամբ, որ սատարում են Հովհաննիսյանին: Ռաֆֆին հարթակից իջավ, գրկեց ու համբուրեց նրանց՝ հավաստիացնելով, որ արդարությունը վերականգնվելու է:

«Բարեւի» հանրահավաքին երեկ միացավ երգիչ **Ռուբեն Հախվերդյանը**:

Տես էջ 8

ԱԶԳ Ընթացիկ

Գյուղատնտեսության պետական աջակցությունը շարունակվելու է նաեւ այս տարի

Դրա կարեւորությունը գյուղացու համար չի կարող հասկանալ միայն գյուղից եւ գյուղատնտեսությունից հեռու մարդը

Գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որ մշտական հոգածության կարիք ունի՝ նկատի ունենալով Ե՛ւ նրա ռիսկայնությունը, Ե՛ւ գյուղում ապրող մարդկանց լիակատար կախվածությունը այս ճյուղից: Բարեբախտաբար, դրա գիտակցումը արդեն կա նաեւ մեր երկրում: 90-ականների «վայրի լիբերալիզմից» հետո, երբ իշխանությունները հայտարարում էին, որ իրենք չպետք է խառնվեն տնտեսությանը, դրանով իսկ ազատելով իրենց պարականությունները կատարելուց եւ 2000-ականների անտարբերությունից հետո, վերջին 2-3 տարիներին պետությունը սկսեց գյուղատնտեսության լայնածավալ օժանդակության ծրագրեր իրականացնել: Դրանք ընդգրկեցին տասնյակհազարավոր գյուղացիական տնտեսություններ: Հիշեցնենք այդ ծրագրերից հիմնականները:

Պետական բյուջեից մոտ 32 մլրդ դրամ հատկացվեց 2011-ին եւ 2012-ին բանկերի կողմից տրվող գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորմանը: 14 տոկոս կազմող գյուղվարկերի 4 տոկոսի, իսկ լեռնային եւ սահմանային գյուղերում 6 տոկոսի ֆինանսավորումը պետությունը վերցրեց իր վրա: Դա հնարավորություն տվեց զգալիորեն ավելացնելու վարկեր վերցնողների թիվը: Անցած երկու տարիներին այդ վարկերից օգտվեցին, ինչպես երեկ հայտնեց գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, 43 հազար գյուղացիական տնտեսություններ: Նա նաեւ հայտնեց, որ այս տարի գարնանացանի համար նույն նպաստակով պետությունը կհատկացնի եւս 7,5 մլրդ դրամ:

Հաջորդը դիզվառելիքի եւ պարարտանյութի ձեռքբերման ծախսերն էին: Առաջինի դեպքում կառավարությունը գյուղացիներին տրամադրեց 12,5 հազար տոննա դիզվառելիք՝ շուկայական գնից զգալիորեն ցածր գնով՝ 1 լ-ը 350 դրամով: Այսինքն, վառելիքի շուկայական գնի եւ գյուղացիներին մատակարարման գնի տարբերությունը փոխհատուցվեց պետության կողմից:

Պարարտանյութերի տրամադրման ծրագրի շրջանակներում էլ անցյալ տարի մոտ 25 հզ. տոննա ամոնիակային սելիտրան գյուղացիներին տրամադրեց դարձյալ շուկայականից ցածր գներով՝ 1 կգ-ն 120 դրամով կամ 1 պարկը 6 հզ. դրամով:

Կարեւորն այն է, որ այս տարի եւս նման ծրագրերը շարունակվելու են, քանի որ առանց դրանց դժվար է գյուղատնտեսության մեջ նկատելի զարգացումներ ակնկալել: Քանի դեռ գյուղատնտեսությունը շարունակում է մնալ ռիսկային եւ իրատեսական չէ գյուղատնտեսության ապահովագրությունը, պետական աջակցության ծրագրերը նաեւ ռիսկի որոշ մաս են վերցնում իրենց վրա:

Այս ամսին տեղի ունեցած կառավարության նիստերից մեկում հաստատվեցին 2013 թվականի համար մատչելի գնով դիզելային վառելանյութ եւ ազոտական պարարտանյութ ձեռք բերելու նպաստակով պետական աջակցության ծրագրերը եւ դրանք իրականացնելու նպաստակով գյուղատնտեսության նախարարությանը հատկացվեց ավելի քան 3 մլրդ դրամ: Աջակցության շնորհիվ հանրապետություն ներկրվելիք ավելի քան 27 հազար տոննա ազոտական պարարտանյութի 50 կիլոգրամանոց պարկը գյուղացիներին այս տարի եւս կվաճառվի 6 հազար դրամով, իսկ ավելի քան 17 հազար տոննա լիտր դիզելային վառելանյութի ամեն մի լիտրը՝ 350 դրամով: Այսինքն, բացի նրանից, որ գյուղատնտեսության աջակցության ծրագրերը շարունակվում են, ավելանում են դրան հատկացվող միջոցները, հետեւաբար կավելանա նաեւ օգտվողների թիվը:

Գյուղատնտեսության պետական աջակցության մյուս բաղադրիչը գյուղացիներին սերմացու տրամադրումն է: 2013-ի գարնանացանի ժամանակ հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու եւ սերմացուի պահանջարկը մասամբ բավարարելու նպաստակով կառավարությունն իր նախորդ նիստում հաստատել է գարու, եգիպտացորենի, առվույտի եւ կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը: Համաձայն այդ ծրագրի՝ արտերկրի եւ տեղական սերմնարտադրող կազմակերպություններից ձեռք կբերվի եւ գյուղացիական տնտեսություններին կտրամադրվի 850 տ գարնանացան գարու, 11 տ եգիպտացորենի, 37 տ առվույտի եւ 530 տ կորնգանի սերմացու: Եթե դիզվառելիքն ու պարարտանյութը պարզապես անհրաժեշտ պայմաններ են գյուղատնտեսության եւ մասնավորապես հողագործության մեջ, ապա տրամադրվող սերմացուի շնորհիվ ակնկալվում է ավելացնել ցանքատարածությունները, համախառն բերքը, ինչպես նաեւ գյուղացիական տնտեսությունների եկամուտը: (Հիշյալ սերմնացուների նպատակահարմարության հարցին «**Ազգ**»ը կանդրադառնա հետագայում):

Սերմացուի տրամադրման նպաստավոր պայմանների մասին կառավարության նիստի ժամանակ հայտնել է վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: «Մենք շարունակում ենք բարձրորակ սերմեր ներկրել Հայաստանի Հանրապետություն, եւ հասկանալի է՝ արտադրողականության աճ ենք ապահովում դրա շնորհիվ», ասել է վարչապետը եւ նշել, որ սերմացուի տրամադրման ժամանակ հաշվի է առնվել դրա շուկայական գինը եւ գյուղացիներին տրամադրվել է շուկայականից 40 տոկոս ցածր գնով: Այդ տարբերությունը եւս պետությունը ֆինանսավորել է իր միջոցներից:

Կարելի է սպասել, որ գյուղատնտեսության աջակցության մյուս ծրագրերը եւս այս տարի կշարունակվեն: Դրանց կարեւորությունը գյուղացու համար չի կարող գիտակցել միայն գյուղից եւ գյուղատնտեսությունից հեռու մարդը: Ավելացնենք միայն, որ նման ծրագրերի իրականացման անհրաժեշտություն կա նաեւ, բացի հողագործությունից, անասնապահությամբ զբաղվող մեր համերկրացիների համար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՅՎԱԾ ԱՂԱՆԴՆԵՐ

Նախագահի թեկնածուներից մեկն աղանդավոր է

Հայաստանում 2013-ին անցկացված նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուներից մեկն աղանդավորական մի կառույցի ներկայացուցիչ է, այդ թեկնածուն նույնիսկ աղանդավորական կազմակերպություններից մեկի ղեկավարի երեխայի խավորն է: Այս մասին երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Քայֆայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական ու օգնության կենտրոնի նախագահ **Ալեքսանդր Ամարյանը**, որը թեեւ չնշեց թեկնածուի անունը, բայց նշեց, որ նրա անունն անմիջականորեն կապված է այս օրերին ծավալվող հանրահավաքների հետ: Ալեքսանդր Ամարյանը հավելեց, որ այս թեմայով նորից կխոսի, երբ ավարտվեն հետընտրական զարգացումները: Իսկ ընտրություններից առաջ Ա. Ամարյանը թեկնածուի անունը չի հրապարակել, որպեսզի հակադարձություն չտացվի:

Ալեքսանդր Ամարյան

Բանախոսը նաեւ հիշեցնում է, որ բոլոր երկրներում էլ գունավոր հեղափոխություններն իրականացրել են աղանդավորական շարժումների մեջ գտնվող քաղաքական գործիչները, օրինակ՝ Ուկրաինայում «Աստծո դեսպանատուն» կառույցի ներկայացուցիչները կարողացան հրապարակ հանել 50 հազար մարդու:

Ի դեպ, վերջերս Հայաստանում սկսել են ակտիվանալ «Աստծո հարսնացուներ» եւ «Կենդանի հավք» կոչվող աղանդները, որոնք դեմ են իշխանություններին ու կարծում են, թե իշխանությունը հենց իրենք են: Այս աղանդները Հայաստանում գործում են շուրջ մեկուկես տարի եւ ծավալում են գործունեություն կառավարության դեմ: Եվ վերջերս տարածված լուրերը, թե Հայաստան են ներթափանցել նոր աղանդներ, Ալեքսանդր Ամարյանը հերքեց՝ ասելով, որ դրանք ամենեւին էլ նոր չեն, ուղղակի վերանվանվել են: Դրանցից մեկը՝ «Աստծո հարսնացուները», մտնում է «Աստծո դեսպանատուն» հոգեւոր կառույցի մեջ: «Աստծո դեսպանատան» հայաստանյան մասնաճյուղն էլ կոչվում էր «Կենդանի հավք», սակայն «Կենդանի հավքը» դուրս եկավ «Աստծո դեսպանատուն» կառույցից ու հիմա ներկայացնում է առանձին ուղղություն:

Ներկայումս Հայաստանում գրանցված է կրոնական 67 կազմակերպություն, իսկ առանց գրանցվելու գործունեություն են ծավալում եւս 200-ը, եւ այժմ, ըստ պարոն Ամարյանի, աղանդ բացելը դարձել է միլիոնատեր դառնալու պարզ ճանապարհ: «Օրինակ՝ գրանցում ես քո եկեղեցին ՀՀ պետռեգիստրում, հետո բարձրացնում աղմուկ, թե քեզ այստեղ ճնշում են, ու ի վերջո Ամերիկայից սկսում են քեզ ֆինանսավորել», ավելացրեց Ա. Ամարյանը:

Ի. Պ.

Տնտեսական աճը 2012-ին կազմեց 7,2 տոկոս

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** երեկ հրապարակեց երկրի տնտեսական զարգացման 2012-ի կարեւոր ցուցանիշները, համաձայն որոնց՝ տնտեսական (ՀՆԱ) աճը կազմել է 7,2 տոկոս՝ 0,2-ով ավելի, քան երկրի նախագահը կառավարության առջեւ դրել էր իբրեւ թիրախ: «2013-ի համար մենք ծրագրել ենք 6,2 տոկոս տնտեսական աճ, իսկ դա նշանակում է, որ պետք է բավական լարված աշխատանք կատարենք այն իրականություն դարձնելու համար», ասաց վարչապետը՝ հորդորելով կառավարության անդամներին եռանդով գործել:

Ա. Մ.

ՀՀԿ-ն, «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն բանակցում են

1-ին էջից

Ռուբիկ Հակոբյանը նույնպես ասելիք դեռ չուներ, ասաց միայն, որ բանակցությունների ընթացքում բացահայտումներ անելը չի նպաստում բանակցությունների նորմալ ընթացքին. «Մենք ամբողջական փաթեթ ենք ներկայացրել զուտ խորհրդարանի գործառույթների շրջանակում»:

ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** եւս արտահոսք չարեց, բայց առաջարկությունները կոչտ անվանեց, նշելով, որ դեռեւս բանավոր զրույցով է լսել դրանք: Բայց ընդհանրապես՝ հնարավոր էր համարում, որ ընդդիմություն-իշխանություն կկարողանան համաձայնության գալ ոչ թե պաշտոնների բաժանման շուրջը, ինչպես հասարակությունն է մտածում, այլ՝ որոշակի խնդիրների համատեղ լուծում տալու առումով:

Նա նաեւ աբսուրդ համարեց նախագահական ընտրություններից հետո խորհրդարանի լուծարումը. «Խորհրդարանը լուծարվի, որ ինչ լինի: Անցած անգամ 5 տոկոս էին վերցրել՝ իրենք իրենց տունը քանդո՞ւմ են: Դա մեր թիմի համար ընդունելի չէ, որովհետեւ նախագահական ընտրությունները որեւէ աղերս չունեն խորհրդարանական ընտրությունների հետ, դա որեւէ խնդիր չի լուծի: Ու քաղաքական պայմանավորվածություններն էլ պետք է տարանջատել գործադիրի վերաբերյալ պայմանավորվածությունից՝ թե ո՞ր ոլորտներում կարող ենք համագործակցել բարեփոխումներ իրականացնելու համար»:

Բանակցությունները դեռ շարունակվելու էին:

Մ. Խ.

Հ. Գ. Ի դեպ, երեկ լրագրողները նաեւ ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանից հետաքրքրվեցին, թե ԲՀԿ-ն տեղյակ կամ մասնակցո՞ւմ է այդ բանակցություններին:

Նաիրա Զոհրաբյանը նշեց, որ երբ խորհրդարանական քաղաքական ուժերը կգան կոնսենսուսի, թե ինչ ֆորմատով անցկացնեն քննարկումները, իրենց հրավիրեն շատ ավելի լայն ֆորմատով քննարկումների, այդ ժամանակ իրենց ասելիքը եւ առաջարկները կներկայացնեն: 100 տոկոս ընտրակարգը ԲՀԿ-ի համար ընդունելի է, արտահերթ խորհրդարանական ընտրություններին Ն. Զոհրաբյանը վերապահումով է վերաբերվում: Էլի ի դեպ՝ նա անձնապես որեւէ քաղաքական մոտիվացիա չէր տեսնում, որ ԲՀԿ-ն մասնակից լինի խորհրդարանական կոալիցիային:

«Հարավկովկասյան երկաթուղին» բարձրացրեց կոնտեյներային գնացքի սակագները

2013 թվականի փետրվարի 1-ից վրացական երկաթուղին 3,5%-ով թանկացրել է սակագները 20-ֆուտանոց կոնտեյներների փոխադրման համար եւ հրաժարվել է 40-ֆուտանոց կոնտեյներների տեղափոխման ժամանակ կիրառվող 0,82 չափով նվազեցնող գործակցից:

Հայկական բեռնափոխադրողների համար հնարավոր գնային ճնշումների նվազեցման նպաստակով «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը փետրվարին զբաղում էր բեռնափոխադրումների սակագների թանկացումը սեփական ռեսուրսների հաշվին: Սակայն ղեկավարվելով վրացական երկաթուղու հետ կնքված միջազգային երկաթուղային հաղորդակցությունում գործող կոնտեյներային գնացքի կազմակերպման մասին համաձայնագրով եւ ձեռքբերված պայմանավորվածություններով՝ 2013 թվականի մարտի 1-ից Հայաստանի տարածքում գործողության մեջ են դրվում նոր սակագներ:

Այսպիսով, սակագինը մեկ 40-ֆուտանոց բեռնված կոնտեյների համար կկազմի 0,96 դոլար մեկ տոննա-կմ համար՝ նախկին 0,78-ի դիմաց, իսկ դատարկ կոնտեյների համար՝ 0,48 դոլար՝ նախկին 0,39-ի դիմաց: Բեռնված եւ դատարկ 20-ֆուտանոց կոնտեյների համար սակագինը կկազմի համապատասխանաբար 0,56 եւ 0,28 դոլար մեկ տոննա-կմ համար՝ նախկին 0,54-ի եւ 0,27-ի դիմաց:

Այս մասին տեղեկանում ենք «Հարավկովկասյան երկաթուղու» տարածած հայտարարությունից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Զգալ Հայաստանը

Նախագահ Սարգսյանը Սերժ Թանգյանին պատասխանելով՝ ասել էր. «Հայաստանը պետք է զգալ»՝ նկատի ունի ենթատեքստում, որ դրսից անհնար է զգալ այնպես, ինչպես ներսի քաղաքացին է զգում: Այս խոսքն, հարկե, երկսայրի է, քանի որ ներսի քաղաքացու զգացողությունը հենց ներսիններն միշտ բացատրել են ամեն մեկն իր ձեւով, ներսիններին մի զգալի մասի զգացողությունը նաեւ Ռաֆֆի Հովհաննիսյանին տված ձայների տոկոսում է: Ու որ ասում է, թե՝ այո, «ժամանակն է փոփոխության, ոչ ոք չի կարող օրենքից բարձր լինել, կեղծիքն ու երեսպաշտությունը, զոռբայությունն ու թշնամանքը քանդելու ենք հատիկ առ հատիկ, ու հետեւողականորեն, որ բացձակաս գոռանք՝ ազատություն, մենք ազատ ենք», դա նախ պետք է վերաբերի իր թիմին:

Զգալու համար շատ բան է պետք, առաջին հերթին՝ տեղերի իրական պատկերն առաջին ձեռքից եւ ոչ թե սվաղած տեղեկություններ, որ հավանաբար հասցնում են նախագահին նրա կողմնակիցները, երեւի նախ սեփական շահը հեսաղնդելով:

Տեսնես նա գիտե՞, թե ովքեր են իրականում տեղերում, ամենասոցիալական օղակներում համակարգում կուսակցական աշխատանքը, ինչո՞ւ են մեծ մասամբ դա անում ոչ թե մտավորականներ ու կրթված մարդիկ, այլ տեղական խանութպաններն ու վեցերորդ դասարանի կրթությամբ ինչ-որ կասկածելի տղաներ, որոնց առկայությունը նեղացնում է մտավորական շերտին (չէ, սխալ չհասկանաք, խանութպան լինելն ամենեւին էլ վիրավորական չէ, սակայն խանութի օրենքներով ղեկավարվող կուսակցականն է վիրավորական), եւ այդ զգացողության առկայության մասին իմանալը սկզբունքորեն պետք է կարեւոր լիներ նախագահի համար: Այդ մարդկանց ու նրանց «տիդիրիթների» հետ շփվող ընտրողն է հենց վերցրել ու գնացել-ընտրել միգուցե Ռաֆֆուն, քանի որ վիրավորական է, երբ ցուցակը ձեռքին կիսագրագետ մարդկանց են ուղարկում տները, թե՝ սոցհարցում ենք անում, իրականում հարցման թղթի վերջին տողի բացահայտ հարցը պարզելն է գլխավոր՝ ընտրելո՞ւ է արդյոք ՀՀԿ նախագահին:

Հիմա ուրեմն ի՞նչ է զգում նախագահ Սարգսյանը՝ Հայաստանի զգալը նկատի առնելով:

Զգո՞ւմ է արդյոք, որ վերից վար կուսակցականացված կառավարումը անարդարության ամենավառ դրսեւորումներից մեկն է, ու ինչո՞ւ է պարտավոր Հայաստանն ունենալ ՀՀԿ փոխնախագահ-նախարար, որը հաճախ իր պարտականությունների առումով կուսակցական ու պրոֆեսիոնալ երկվության մեջ է հայտնվում իրենից անկախ: Տարանջատել է պետք վերջապես՝ կուսակցական բարձրաստիճանը թող կուսակցական գործերով զբաղվի, պատգամավոր լինի (սա, այո, քաղաքական գործունեության տիրույթ է), իսկ նախարար դառնալուց հետո գոնե առժամանակ մոռանա իր կուսակցական պատկանելությունը;

Զգո՞ւմ է (իսկ նրա ասածները հույս են տալիս, որ զգո՛ւմ է), որ պետք է սկսել նախ իր շրջապատից, ինչը չկարողացավ անել խորհրդարանական ընտրություններին, ու այնտեղ տեղերը գծվեցին հենց ըստ նույն՝ ՀՀԿ ներսի ազդեցության ոլորտների, ներս անցան ե՛ւ օլիգարխներ, ե՛ւ մականունավորներ, եւ օրենսդիր աշխատանքի անպատրաստ մարդիկ: Անգամ մեկ օր առաջ գտնվեց պատգամավոր, որ փոխանակ իր առօրյա քաղաքական, օրենսդրական գործունեությամբ զբաղվի, պատգամավորական հայցարարության ժամանակ պաշտպանել սկսեց իր տարածքի մարզպետին կամ օլիգարխին: Ու առհասարակ՝ խորհրդարանի դեմքերի մեծ մասին նայելով՝ ազգի հույսը մեռնում է, սովորական մարդը պարուրվում է դիսկոմֆորտի զգացումով:

Զգո՞ւմ է արդյոք, որ վաղուց ժամանակն է Հայաստանի տնտեսական զարգացման նվազ արդյունքի արդար վերաբաշխումը՝ արձանագրված աճի բարիքները կրկին վերաբաշխվում են ընդամենը ոլորտները մենաշնորհած օլիգարխների միջեւ, ու սովորական մարդու համբերությունն ու արդարության սպասումը կարող են սպառվել: Զգո՞ւմ է արդյոք, որ այս անգամ սովորական «ռակիրովկաները» բացարձակապես անընդունելի են, եւ եթե վերջապես իրական բարեփոխումներ չսկսի, չազատվի բոլոր, բացառապես բոլո՛ր վարկաբեկված դեմքերից, ընդդիմությունն այժմ արդեն ռեսուրս ունի ուղղորդելու հանրային տրամադրությունները. Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի մանրամասները 1998 թվականին ոչ միայն հասարակությունը, այլեւ նախագահ Սարգսյանն ինքն է հիշում:

Ու այս անգամ այնպես չէ, որ ՀՀԿ-ն հաղթել է, ուրեմն «արխային» պետք է շարունակել նախկինի պես ընդարմ՝ իր հաղթանակի պտուղների վայելումը: Ընդհակառակը, այս ընտրությունները փաստեցին, թե վերջ այլեւս հանգիստ կյանքին, ու ամեն օր նախագահ Սարգսյանը մի բան փոխելով միայն կարող է 58 տոկոսի գծած սահմանը պահել. բայց չէ՞ որ իշխող կուսակցության բոլոր անդամները չեն, որ սովոր են աշխատել, համենայն դեպս՝ աշխատել երկրի համար եւ ոչ թե սեփական գրպանի: Ու ասածը վերաբերում է հաճախ ՀՀԿ-ի առանցքային դեմքերին:

Կարո՞ղ է արդյոք Սերժ Սարգսյանն այնպես զգալ Հայաստանը, որ բացի շնչելու օդը սովորական հայ մարդու համար, ու դա անի ոչ թե գեղեցիկ խոսքով միայն, այլ կյանքում՝ օլիգարխների զբաղեցրած տեղից ազատելով նաեւ հասարակ քաղաքացու համար: Եվ արդյոք այն խոսքերը, որ դրված էին երիտասարդ հանրապետական պատգամավոր Սամվել Ֆարմանյանի հայտարարության մեջ, թե «երեկոյան իրար բերանից հայրենասիրական ճառեր ու կենացներ թռցնելու, իսկ կեսօրին այդ նույն Հայրենիքի ապագան գողանալու գործելաոճի ժամանակն անցել է, եւ սա բոլորիս Հայաստանն է», պատահականությո՞ւն են, թե՞ վերեւից ուղարկված մեսիջ: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու են, օրինակ, քաղաքապետի կամ վարչապետի պաշտոնի համար շրջանառվում նորից անվանարկված մարդկանց անուններ, եւ արդյոք Սերժ Սարգսյանը ի վերջո չի՞ մտածի երկրի ղեկավար դեմքն արմատապես կարգի բերելու մասին:

Ի դեպ, հենց նույն Սերժ Թանգյանը չի ալարել (մամուլում տեղեկություն կար, որ այս նամակները Թանգյանի անունից գրում է «Սիվիլիթասի» տնօրեն Սալբի Ղազարյանը) եւ մի նոր նամակ է ուղղել նախագահ Սարգսյանին՝ վերստին նրա ուշադրությունը հրավիրելով, որ Հայաստանում բողոքում են ընտրությունների արդյունքների եւ քաղաքականության մեջ առկա անարդարությունների դեմ, խնդրելով լսել նրանց բողոքները, եւ առհասարակ՝ համակարգը բարեփոխել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոգեհանգստյան արարողություն ի հիշատակ Սումգայիթի զոհերի

Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու բակում տեղադրված «Սրբոց Նահատակաց» խաչքարի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ Սումգայիթի զոհերի լույս հիշատակի:

1988 թվականի փետրվարին Սումգայիթում ադրբեջանցիների կողմից դաժանաբար սպանված երեսունից ավելի հայերի հիշատակի ոգեկոչման արարողությանը ներկա էին ՌԴ-ում Հայաստանի դեսպան Օլեգ Եսայանը, ՀԱՊԿ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ Արա Բաղալյանը, Մոսկվայում ԼՂՀ ներկայացուցիչ Ալբերտ Անդրեյանը, Ռուսաստանի հայերի միության անդամներ, քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսանողներ, Սումգայիթ քաղաքի նախկին բնակիչներ:

Դեսպան Օլեգ Եսայանը ներկաներին ուղղված իր խոսքում 25 տարի առաջ ադրբեջանական իշխանությունների սանձահարմամբ տեղի ունեցած սումգայիթյան ջարդերը որակեց հայ ժողովրդի նորագույն պատմության ամենամեծ ողբերգություններից մեկը:

«Այս օրերին Ռուսաստանում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումները, հուշերեկոները կոչված են վերստին հարգանքի տուրք մատուցելու Սումգայիթում զոհված հայերի հիշատակին եւ դատապարտելու 1988թ. սարսափելի իրադարձությունները: Համոզված եմ, որ ջարդերի, վայրագությունների եւ մարդու կյանքի անվտանգությանը սպառնացող քրեահանցավոր գործելակերպը չդատապարտելը հանգեցնում է դրանց խրախուսմանը: Եթե «Սումգայիթյան ջարդերին» ժամանակին տրվեր համապատասխան գնահատական, ապա հայ բնակիչների հանդեպ հետագայում վայրագություններ տեղի չէին ունենա Կիրովաբադում, Բաքվում, Մարաղայում եւ այլ քաղաքներում»,- նշեց ՌԴ-ում ՀՀ դեսպանը:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան

«Սումգայիթի ողբերգությունը» այժմ նաեւ իտալերեն

Իտալերենը իններորդ լեզուն է, որով թարգմանաբար լույս է ընծայվում Կանադայում գործող «Զորյան ինստիտուտի» ժամանակին հրատարակած այս գիրքը: Կոտորածների 25-ամյակի առթիվ հրապարակ հանված հատորը կոչվում է «La Tragedia di Sumgait: 1988, Un pogrom di Armani nell' Unione Sovietica»: Հեղինակն է Սամվել Շահմուրադյանը: Նոր հատորում տեղ են գտել անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով թարգմանված տարբերակների նախաբանները՝ գրված համապատասխանաբար մարդու իրավունքների պաշտպաններ Ելենա Բոների եւ Բեռնար Կուշների կողմից:

Ըստ մամուլի հաղորդագրության, գրքի լույս ընծայումը ճիշտ ժամանակին է, քանի որ Ադրբեջանը ներկայումս էլ շարունակում է սպառնալ ինչպես Հայաստանին, այնպես էլ Արցախին, միաժամանակ նավթածոր դոլարների հաշվին նենգափոխելով իրական պատմությունը: Իտալերեն այս նոր տարբերակում լրագրող Սամվել Շահմուրադյանի հարցազրույցները՝ կոտորածները վերապրած ականատեսների հետ, ներկայացված են առանձին թեմաներով, գլուխներով:

Հ. Ծ.

Մասնակցե՞լ, թե՞ չմասնակցել դասադուլի

1-ին էջից

Այս օրերին եւս մի քանի հարյուր ուսանողներ, որոնք հարում են նախագահական ընտրություններում 2-րդ տեղը զբաղեցրած թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանին եւ հավատում են նրան, իրենց բողոքն են արտահայտում ընտրությունների արդյունքներից դասադուլի միջոցով: Քննարկումներ են ընթանում՝ որքանո՞վ է դա ճիշտ կամ օրինական:

Ուսանողները, բնականաբար, իրավունք ունեն իրենց կարծիքը եւ բողոքը հայտնելու, այդ թվում նաեւ դասադուլի միջոցով: Եթե նրանք ավելի կարեւոր են համարում իրենց քաղաքական հայացքները պաշտպանելը, քան ուսումը, եթե նրանք գերադասում են դասադուլը, հակառակ նրան, որ իրենց համար ծնողները ուսման վարձ են վճարում, իսկ անվճար սովորողների համար դա անում է պետությունը, ապա դա, կրկնում ենք, իրենց ընտրությունն է, իրենց իրավունքը եւ իրենց ծնողների խնդիրը: Այսինքն, ոչ մի օրենքի չի հակասում, երբ ուսանողը չի գալիս դասի, իր քաղաքական համոզմունքները պաշտպանում է մասնակցելով դասադուլին, դասերից սանում բացակա, որի պատասխանատվությունը եւս ինքը պետք է կրի:

Սակայն, յուրաքանչյուր մարդու իրավունքները վերջանում են այնտեղ, երբ սկսվում են ոտնահարվել մյուսների իրավունքները: Այս պարզ ճշմարտությունն է, որ ժողովրդավարությունից խոսող քաղաքական գործիչները ոչ իրենք են հասկանում, ոչ էլ սովորեցնում են իրենց հետեւող երիտասարդներին: Այսինքն, ոչ մի ուսանող իրավունք չունի պիտակավորել մեկ այլ ուսանողի, որ վերջինս չի մասնակցում դասադուլի, չի ընդունում դասադուլ անողների քաղաքական հայացքները եւ նախընտրում է ուսում ստանալ ու ջուրը չլցնել այն գումարը, որ նրա ծնողները վճարում են իր ուսման համար: Բուհերի մոտ «ամոթ, ամոթ» վանկարկելը դասադուլին չմասնակցող ուսանողների հասցեին, նրանց «ստուկ», «ֆծնող» կամ այլ պիտակ կպցնելը, նրանց հայրենասիրության պակասի մեջ մեղադրելը ոչ այլ ինչ են, քան մարդու իրավունքների կոպիտ խախտում, որի իրավունքը չունի ոչ ոք՝ անկախ նրանից, թե քաղաքական որ ուժին է հարում: Հոգեբանական ճնշման այս ձեւերը թույլ տվող ուսանողները ճշտությամբ կրկնում են բոլշեւիկյան «ով մեզ մետ չէ, մեր դեմ է» սկզբունքը:

Եթե ուսանողների մի մասը դժգոհում է, որ իրենց պարտադրում են մասնակցել Հանրապետական կուսակցության կազմակերպած միջոցառումներին, ապա նրանք պետք է հասկանան, որ դրանից առավել դատապարտելի է, երբ իրենք ուրիշներին ոչ թե համերգին մասնակցելու, այլ իրենց բողոքին ու դասադուլին միանալուն են պարտադրում:

Ինչ վերաբերում է այն շահարկումներին, թե բուհերի մոտ ոստիկաններ են բերվել, ապա դա ոչ միայն բնական է, այլեւ անհրաժեշտ: Զանգվածային միջոցառման ժամանակ, հատկապես եթե դրան մասնակցում են երիտասարդներ, որոնք նաեւ բախվող տեսակետներ ունեն, պետության, տվյալ դեպքում բուհի ղեկավարության եւ ոստիկանության ուղղակի պարտականությունն է անվտանգություն եւ հասարակական կարգ ապահովելը:

Հայաստան-Վրաստան. երկարաժամկետ փոխգործակցության իրական ներուժը

Վարչապետ Բիձինա Իվանիշվիլու Հայաստան կատարած առաջին պաշտոնական այցից հետո մեզանում աշխուժացան լավատեսական ենթադրությունները, որոնք ուղղված են վերջին երկու տասնամյակների ընթացքում ձեւավորված հայ-վրացական միջպետական հարաբերություններին նոր որակ, իսկ փոխգործակցությանը՝ նոր թափ հաղորդելուն: Ճշմարտություն է, որ վերջին տասնամյակի ընթացքում վրաց քաղաքական գործիչների եւ քաղաքագետների շրջանում տիրում էր մի մտայնություն, թե Հայաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանում ունի ոչ թե սեփական ինքնուրույն դերակատարություն, այլ ընդամենը կատարում է Ռուսաստանի դաշնակցի իր պարտականությունները: Այս մտայնությունն, անշուշտ, մասամբ ցրվեց 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո, երբ Հայաստանը, որը շատ շոշափելի վնասներ կրեց այդ հակամարտությունից, ոչ միայն չվատացրեց իր հարաբերությունները Վրաստանի հետ, այլեւ անդուլ ջանքեր գործադրեց վրաց-ռուսական հարաբերությունները կարգավորելու եւ ավանդական ծիրի մեջ տեղափոխելու ազնիվ գործում: Բոլորս ենք հիշում մեր այն դիրքորոշումը, որ չնայած Հայաստանը փոքր երկիր է եւ առանձնապես հնարավորություններ չուներ միջնորդի դեր կատարելու ռուս-վրացական լարվածությունը հարթելու գործում, սակայն, լինելով Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցն ու գործընկերը եւ, միաժամանակ, Վրաստանի հարեւանն ու բարեկամը, պատրաստ էր անելու հնարավորը խաղաղությունն ու բարիդրացիությունը վերականգնելու համար: Հայաստանի այս կեցվածքն ըմբռնումով ընդունվեց վրացական վերնախավում, եւ հիմա Հայաստանի մասին գնահատականներ անելիս վրաց քաղաքագետներն ու վերլուծաբանները ավելի զուսպ են եւ ավելի խորը: Կարելի էր ենթադրել, թե վարչապետ Իվանիշվիլին Երեւանում խաղցախոսում էր հայ հարեւանին, երբ ասում էր, թե կուզենար, որ Վրաստանն իր արտաքին քաղաքականության մեջ դասեր փոխառներ Հայաստանից, որը կարողանում է լավ հարաբերություններ ունենալ թե՛ Ռուսաստանի, թե՛ Արեւմուտքի հետ: Սակայն բառացիորեն վերջերս Թբիլիսիում անցած մի ասուլիսի ժամանակ Վրաստանի վարչապետը կրկնեց իր այդ տեսակետը, ինչը պարզորեն խոսում է այն մասին, որ սա դարձել է նրա քաղաքական համոզմունքը:

Վրաստանում սովող նախընտրական քաղաքական պայքարն ուղղվածել է բոլորովին նոր իրողություններ, որոնց մասին խոսել մեկ տասնյակ տարվա վաղեմության կատեգորիաներով ուղղակի ճիշտ չէ: Ավելի քան քսան տարվա ընթացքում ձեւավորված երկկողմ հարաբերությունների, ինչպես նաեւ այդ հարաբերություններն ամրապնդող վրացահայության վիճակի եւ հնարավորությունների այսօրվա ուսումնասիրությունը դառնում է շատ կարեւոր, եթե ուզում ենք տեսնել, թե ինչ ապագա կա այդ համագործակցության ու փոխգործակցության համար:

Նախընտրական քաղաքական պայքար եւ իրական ակնկալիք

Վրաստանում, 2002 թ. մարդահամարի տվյալներով (առանց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի), ապրում էր մոտ 250.000 հայ: Իրականում ընդունված է համարել, որ վրացահայերի թիվն այսօր մոտ 320.000 է: Սա այն թիվն է, որը հաճախ շրջանառվում է Վրաստանով հետաքրքրվող քաղաքական եւ դիվանագիտական շրջանակներում: Այսօր հարցը իրականում ոչ թե այս թվի ավելի մեծ կամ ավելի փոքր լինելն է, այլ վրացահության իրական ներուժի ու նրա հիմնախնդիրների իմացությունը: Որովհետեւ միայն այդպես կարելի է հստակ պատկերացում կազմել մեր երկկողմ հարաբերություններում դեռեւս չօգտագործված եւս մեկ ռեսուրսի գործադրման մասին:

Վրացահայերն ունեն ավելի քան 50 հասարակական կազմակերպություններ: Վերջին 3 տարիների ընթացքում վրացահայության նոր մակարդակում ինքնակազմակերպման, Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքում նրա դերի մեծացման հնարավորությունների, թե՛ մայրաքաղաք Թբիլիսիում եւ թե՛ Սամցխե-Ջավախեթի (Ջավախք) տարածաշրջանում ապրող հայերի սոցիալական, հոգեւոր-մշակութային եւ հասարակական կարիքների բարելավմանն ուղղված հասարակական ջանքերը զգալիորեն աճխուժացել են: Այդ ջանքերի արդյունքում է, որ փոխվեց վրացական քաղաքական վերնախավի վերաբերմունքը վրացահայության կարիքների եւ ակնկալիքի վերաբերյալ: Քաջատեղյակ զրուցակիցներս պատմել են, որ նախագահ Սաակաշվիլին հաճախակի եւ նույնիսկ անսպասելի լինում էր Ջավախքում, հետաքրքրվում տարածաշրջանի խնդիրներով, եւ այդ այցելությունների դրական արդյունքները հայության համար դարձել էին անվիճելի: Շատ հայեր դրանում միաժամանակ նույնիսկ վաս բան էին տեսնում, որովհետեւ ասում էին, որ այս այցելությունները եւ նման ուշադրությունը կարող են մեկնաբանվել նաեւ որպես տեղի հայության փասացի ինքնուրույնության սահմանափակման եւ ձեւավորված ավանդական ազգային հարաբերությունները փոփոխելու փորձ: Առայժմ սակայն երեւացել է դրական հետեւանքը, որի վառ դրսեւորումներն են տարածաշրջանի գազամատակարարումը, էլեկտրահաղորդման համակարգերի որակական արդիականացումը, ժամանակակից ու բարձրակարգ ավտոմայրուղիները: Ջավախքը ռազմավարական նշանակություն է սկսում ստանալ, որովհետեւ այդտեղով անցնող նավթամուղին ամենաուշն այս աշնանը կգումարվի նաեւ Թուրքիան Վրաստանին կապող ժամանակակից երկաթգիծը: Ասում են, որ ընդամենը տասը տարի առաջ Թբիլիսիի առաջնակարգ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացող հայ ուսանողների թիվը չէր հասնում մեկ տասնյակի: Այսօր այդ ուսանողների թիվը մոտ 700 է, եւ դրանում վրացական հասարակության մեջ վրացահայության լիարժեք ինտեգրման գծի կողմնակիցները տեսնում են լուրջ առաջընթաց եւ էական հաջողություն: Վրացահայության խնդիրների մասին կխոսենք քիչ հետո, իսկ հիմա անդրադառնանք նախընտրական գործընթացին:

Այսօրվա վրացական քաղաքական երկնակամարում մրցում են երկու խոշոր քաղաքական բեւեռներ: Նախագահ Սաակաշվիլու կյանքը կազմակերպող, բոլորին հայտնի հայազգի գործիչների կողքին դժվարությամբ են ավելանում նորերը, որոնք նույնքան աշխույժ եւ միաժամանակ ընդունելի կլինեին վրացական քաղաքական վերնախավերի կողմից: Սրանից հոռետեսական եզրակացություններ անելը միամտություն կլիներ, որովհետեւ առնվազն վերջին մեկ հազարամյակի ընթացքում Վրաստանում պատկառելի ներկայություն ապահոված վրացահայերը ավելի վատը չեն, քան մյուս հայ համայնքների մերօրյա ներկայացուցիչները: Այսպիսի լավատեսություն ունեն նաեւ Վրաստանով հետաքրքրվող մեր շատ մասնագետներ, ովքեր կարծում են, որ հակառակ բեռնափոխադրող «Աղավեն» ընկերության գլխավոր տնօրեն **Գագիկ Աղաջանյանը**. «Այն քայլերը, որ պետք է անել Վրաստանի եւ Հայաստանի ինտեգրացիայի համար, մաքսային, հարկային, վարչական, բանկային եւ այլ ոլորտներում են: Այս ճանապարհին մենք էլ խնդիրներ ունենք լուծելու, նրանք էլ: Սրանք մոտավորապես այնպիսի խնդիրներ են, որոնք առաջանալու են, օրինակ, եվրասիական ինտեգրման ճանապարհին: Պետք է բարելավվի օրենսդրությունը, որը թույլ կտա զարգացնել բիզնեսը: Պետք է նայել, թե ինչն է խանգարում դրան: Օրինակ՝ ձեւավորված կարծրատիպերն ու կարծրացած մոտեցումները: Կամ պարզ օրինակ՝ մտածել միասնական մաքսային ծառայություն ունենալու մասին: Վրաստանի նավահանգիստները Հայաստանի տնտեսական դարպասն են: Իրականում բոլորովին դժվար չէ մտածել եւ լուծել Հայաստանի եւ Վրաստանի համատեղ մաքսային ծառայություն ձեւավորելու հարցը: Մենք նավահանգստում կարող ենք ունենալ 10-12 մաքսավորներ եւ այդ փուլում մաքսային ձեւակերպումները ավարտելով, կարող ենք ստանալ շատ էական պրոցեդուրալ առավելություններ: Ամեն մի հայաստանցի գործարար դա կհաստատի: Մաքսային այդ ծառայությունների ենթակայության հարցն էլ կարելի է լուծել ոչ ստանդարտ ճանապարհով, ստեղծելով միասնական ցանց: Երբ բեռը մտնում է Հայաստան, մաքսավորների համացանցում անմիջապես երեւում է: Թող այդ տեղեկությունը երեւա, երբ բեռը հասնում է արդեն վրացական նավահանգիստ: Սա է իրական ինտեգրացիայի օրինակը: Առանց այս կարգի բարեփոխումների կարելի կլինի խոսել համագործակցության մասին, բայց չի կարելի խոսել՝ ինտեգրացիայի»:

Վրացահայությունը ինտեգրման ճանապարհին

Հայ առաքելական եկեղեցին ակնկալում է հետ ստանալ առնվազն վեց եկեղեցիներ Թբիլիսիում եւ Սամցխե-Ջավախեթիում, եւ բոլորն են հասկանում, որ այս հարցին ինչ-որ ժամանակ ինչ-որ լուծում պետք է տվի: Վիրահայոց թեմի առաջնորդն այսօր արդեն լուրջ հեղինակություն եւ մեծ ազդեցություն ունի Վրաստանում: Հասարակական-քաղաքական եւ մշակութային պատշաճ ազդեցություն ունենալու մասին սկսել են մտածել ակտիվ վրացահայերի նաեւ միջին ու երիտասարդ սերունդները: Վրացիների եւ հայերի հոգեւոր ու մշակութային բազմադարյա առանձնահատուկ եւ զգայուն փոխհարաբերությունները Հայաստանում եւ Վրաստանում ապրող, խնդրով մտահոգ գործիչների համոզմունքով մի փաստարկ են, որ խոսում են երկկողմ հարաբերությունների էլ ավելի բարելավման ներուժը մեծացնելու հնարավորության մասին:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

Ադրբեջանցի հրոսակի խնդիրը պատերազմում կրած խայտառակ պարտությունը չէ

Նա չի մարսում Սումգայիթից հետո նաեւ Արցախում նախճիր սարքելու հնարավորությունից զրկվելը

Կան ժողովուրդներ, որոնց մինչեւ չես պատժում, չեն գիտակցում իրենց արած չարագործությունը: Ելնելով սումգայիթյան չարագործություններից, այդպիսի ժողովուրդների թվին կարելի էր դասել ադրբեջանցիներին: Սակայն ժողովուրդը մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրությունն է, իսկ Կովկասի երբեմնի թաթարը, որը 20-րդ դարի 30-ականներին միայն սացավ ադրբեջանցի էթնոնիմը, այն էլ շնորհիվ խորհրդային կարգերի, ոչ թե մարդկանց ընդհանրություն է, այլ՝ պոչաս բորենիների հոմակ:

Պոչը կորցրել է արցախահայությանը բնաջնջելու առաջադրանքով Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմում: Ըստ երեւույթին Սումգայիթում սարքած նախճիրի համը մնացել էր ադրբեջանցի վիժվածքի բերանը: Սակայն բախվելով մի բուռ ազատամարտիկի դիմադրությանը, ադրբեջանական հոմակը ցաքուցրիվ եղավ: Մի մասը շանսասակ արվեց կամ հեզ ոչխարի կերպարանք ընդունելով, հանձնվեց հաղթողների ողորմածությանը, մյուսն էլ՝ զենքը շպրտեց եւ հայ ազատամարտիկի տրամադրած միջանցքով, առանց հետ նայելու, ճողոպրեց ռազմի դաշտից:

Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական բորենին ոչ միայն խայտառակ պարտություն կրեց, այլեւ պատճառ դարձավ, որ այդ պարտությունը միեւնույն խայտառակությամբ համտեսելիս, հայ ազատամարտիկի առջեւ գլուխ խոնարհեն նաեւ «զգոն թուրքերը», որոնց «գորշ գայլերի» առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշը ցեղակիցներին օգնելու նկատառումով Լեռնային Ղարաբաղ էր գործուղում:

Հարկ է, սակայն, նշել, որ ադրբեջանցի բորենիների խնդիրը պատերազմի խայտառակ պարտությունը չէ, այլ պարտության հետեւանքով անպաշտպան կանանց, ծերերին, երեխաներին տանջամահ անելու հաճույքից զրկվելը: Արժանապատվությունից զուրկ այս բորենին ոչ թե չի մարսում խայտառակ պարտությունը կամ ամաչում դրա համար, այլ ափսոսում է Սումգայիթից հետո նաեւ Արցախում նախճիր սարքելու հնարավորությունը կորցնելու համար:

Քանի որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցի բորենու ճակատագրին են արժանացել նաեւ «զգոն թուրք» կոչեցյալ արյունարբու վիժվածքները, այսինքն՝ նմանապես շանսասակ են արվել, գերի հանձնվել եւ խուճապահար փախել են ռազմի դաշտից, ուստի սրանք նույնպես ափսոսում են առիթը բաց թողնելու, այլ ոչ թե ամաչում վարձկան մարդասպանի կարգավիճակ ստանալու համար:

Ի դեպ, ամոթը մարդկանց համար է, ոչ թե նույնիսկ 21-րդ դարում գոնե մի փիչ մարդ դառնալու փոխարեն մարդասպանով հիացող վիժվածքների: Թուրք վիժվածքն առ այսօր հիանում եւ փառաբանում է Օգյուն Սամասթին, սրա եղբայրակից ադրբեջանցի վիժվածքը՝ Ռամիլ Սաֆարով կոչված տականքին: Իզուր չեն ասել «Մեկ ազգի երկու պետություն» կամ «Շունը՝ շնից, երկուսը՝ մի տնից»: Թերեւս այս ասացվածքներով պետք է բացատրվի ադրբեջանական բորենու վայնասունին թուրքական վիժվածքի արձագանքը:

Խոսքը փետրվարի 26-ին Ֆրանսիայի Ազգային ժողովին շեմքում «Սումգայիթի դեմքերը 25 տարի անց. ներկա վիճակն ու հեռանկարները Լեռնային Ղարաբաղի բնակչության համար» թեմայով խորհրդարանական Ֆրանսուա Ռոշբլանի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառմանը «Խոջալուի զոհերի հիշատակը» հարգելու ադրբեջանցի երկու վիժվածքի սադրանքի մասին է:

Մինչ սադրանքի առնչությամբ Ադրբեջանը նոտա է տալիս Ֆրանսիային, իսկ ադրբեջանական բորենու ձագերը բողոքի ցույց են կազմակերպում Բաքվում Ֆրանսիայի դեսպանատան առջեւ, «Դունյա բուլթենի» լրատվական գործակալությունը շտապում է իրազեկել հայատյացության անասնական բնազդով տառապող թուրք վիժվածքին, թե դաշնակցականները Ֆրանսիայի Ազգային ժողովում դաժան ծեծի են ենթարկել Փարիզում «Ադրբեջանի տան» տնօրեն Ֆաթալիեւային եւ ուսանող Հուսեյնովին, որոնց վիրավոր վիճակում տեղափոխել են հիվանդանոց:

Թուրքական կայքէջը, ինչ խոսք, հարկ չի համարում նշել, որ միջադեպի հետեւանքով չեղյալ է հայտարարվել Ֆրանսիայի «Նոր սերունդ» կազմակերպության փետրվարի 27-ին Ֆրանսիայում Ադրբեջանի դեսպանատան առջեւ ծրագրված բողոքի ակցիան:

Խնդիրը, իհարկե, բողոքի ակցիան չեղյալ հայտարարելը չէ, այլ Սումգայիթում ադրբեջանցիների ձեռքով գազանաբար սպանված անպաշտպան հայ կանանց, երեխաների, ծերերի հիշատակը նույնիսկ Ֆրանսիայի Ազգային ժողովի շեմքում անարգող սումգայիթյան մարդասպանի լկտիությունն անպատիժ թողնելը: Ծեծը հազիվ թե արդյունավետ պատիժ լինի ադրբեջանցի վիժվածքի համար: Ղարաբաղյան պատերազմում այս վիժվածքը շան ծեծ արդեն կերել է իր զգոն եղբայրների հետ: Հետեւաբար պետք է մտածել մեր քույրերի, եղբայրների վրեժը լուծելու եւ սումգայիթյան մարդասպանին ինչպես հարկն է պատժելու մասին, այլապես անհնար կլինի զսպել ադրբեջանական բորենու լկտիությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՆ

Չավեսը հիվանդանոցից շարունակում է Վենեսուելայի կառավարումը

Հիվանդանոցում բուժվող նախագահ Ուգո Չավեսը շարունակում է կառավարել Վենեսուելան, հայտարարել է երկրի փոխնախագահ Նիկոլաս Մադուրոն: Նա ընդգծել է, որ «չնայած շնչառության հետ կապված խնդիրներին եւ շնչափողում տեղադրված խողովակին, նախագահը ցուցումներ է տալիս եւ աշխատում է իր ժողովրդի համար»:

Մադուրոյի խոսքերով, Չավեսը գիտե, որ «իր կողքին կան մարդիկ, որոնք պատրաստ են ամեն պահի կատարել իր ցուցումները»:

Փետրվարի 28-ին որոշ լրատվամիջոցներ, Ամերիկյան պետությունների կազմակերպությունում Պանամայի նախկին դեսպան Գիլյերմո Կոչեսին վկայակոչելով, հաղորդել էին, թե Վենեսուելայի իշխանությունները հնարավորություն են տացել Ուգո Չավեսին անջատելու հարկադիր կենսապահովման համակարգերից: Կոչեսի կարծիքով, անջատումը տեղի է ունեցել 4 օր առաջ՝ այն բանից հետո, երբ արձանագրվել է Չավեսի ուղեղի մահը: Նրա խոսքերով, Չավեսը կլինիկական մահվան վիճակում է անցյալ տարվա դեկտեմբերի 30-ից:

Իր հերթին Ինտերֆաքս գործակալությունը հիշեցնում է, որ 2013-ի հունվարին Պանամայի կառավարությունը Գիլյերմո Կոչեսին պաշտոնանկ է արել Վենեսուելայի կառավարության եւ Ամերիկյան պետությունների կազմակերպության գլխավոր քարտուղարի հասցեին արած կտրուկ քննադատությունների պատճառով:

Վենեսուելայի խորհրդարանի նախագահ Դիոսդադո Կաբելլոն նշել է, որ փետրվարի 21-ին նախագահ Չավեսը որոշ ընդհատումներով 5 ժամ շարունակ ցուցումներ է տվել կառավարության անդամներին, գրավոր կերպով շփվելով նրանց հետ: Արտասահմանյան լրատվամիջոցները անցյալում եւս հաղորդել էին Կուբայում ուռուցքային հիվանդությունից բուժվող Վենեսուելայի նախագահի առողջական վիճակի վատթարացման մասին, սակայն Վենեսուելան մշտապես հերքել էր նման տեղեկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆ

Սիրիայում սպանվել է «Հզբոլլահի» երկրորդ դեմքը

Փախստականների թիվը մոտենում է մեկ միլիոնի

«Սիրիայի ազատ բանակի» ապստամբները հայտարարել են, որ սպանվել է լիբանանյան «Հզբոլլահ» շարժման գլխավոր քարտուղար Նաիմ Քասեմը: Այդ մասին հաղորդում է Now կայքէջը:

Հաղորդման համաձայն, «Հզբոլլահի» երկրորդ դեմքը սպանվել է անցյալ օրը Դամասկոսից դեպի Լիբանանի սահման շարժվող սիրիական պահակախմբի վրա ապստամբների կատարած հարձակման ժամանակ:

Ավելի վաղ ապստամբները հայտարարել էին, թե այդ հարձակման գլխավոր թիրախը եղել է սիրիացի գեներալ Մուհամմեդ Ալի Դուրգամը: Մարտի ժամանակ նա ծանր վիրավորվել է: Նաեւ հաղորդվել է, որ սպանվել են «Հզբոլլահի» մի քանի ակտիվիստներ, որոնց անուններն ու պաշտոնները չեն հրապարակվում:

Սիրիայի կառավարությունը եւ «Հզբոլլահը» առայժմ պաշտոնապես չեն հաստատել այս պնդումները:

Անցյալ շաբաթ սիրիացի ապստամբները վերջնագիր էին ներկայացրել «Հզբոլլահին»: Նրանք պահանջել էին անհապաղ դադարեցնել միջամտությունը Սիրիայի գործերին, սպառնալով հակառակ դեպքում ամենուրեք հարձակվել շիա գրոհայինների վրա: «Հզբոլլահի» առաջնորդ Հասան Նասրալլահը չէր արձագանքել վերջնագրին, եւ դրանից հետո ապստամբները մի շարք հրթիռահարվածներ էին հասցրել եւ ականակոծել էին Լիբանանում գտնվող «Հզբոլլահի» օբյեկտները:

Շիա արմատականների «Հզբոլլահ» շարժումը տարածաշրջանում նախագահ Բաշար Ասադի վարչակարգի գլխավոր դաշնակիցներից մեկն է: Անցյալում Նասրալլահը բանիցս պաշտպանություն է հայտնել ապստամբների դեմ պայքարող Սիրիայի կառավարությանը:

Միաժամանակ հաղորդվում է հարեւան երկրներում սիրիացի փախստականների թվի կտրուկ աճի մասին: Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի փախստականների գործերով գերագույն հանձնակատար Անտոնիու Գուտերեշը հայտարարել է, որ հարեւան երկրներում սիրիացի փախստականների թիվը հասել է 940 հազարի եւ շուտով կանցնի 1 միլիոնից: Նա պատմել է, որ սիրիական ճգնաժամի ծագումից մեկ տարի անց հարեւան պետություններում սիրիացի փախստականների թիվը ընդամենը 33 հազար էր, մինչդեռ 2013-ի հունվարից սկսած ամեն շաբաթ սահմանը հատում է մոտ 40 հազար մարդ: Ի-ՏԱՌ-ՏԱՍՍ-ի տեղեկությունների համաձայն, փախստականների մեծ մասը ապաստանել է Հորդանանում, Լիբանանում, Թուրքիայում եւ Իրաքում:

Իշխանությունների եւ անջատականների համաձայնագիր Թաիլանդում

Թաիլանդի իշխանությունները առաջին անգամ հաշտության համաձայնագիր են ստորագրել երկրի հարավում գործող անջատականների հետ: Այդ մասին հաղորդում է The Bangkok Post թերթը: Անվտանգության ազգային խորհուրդը, որը 2006 թ. հեղաշրջումից ի վեր փաստորեն վերահսկում է երկիրը, փետրվարի 28-ին զինադադարի վերաբերյալ համաձայնության է հասել «Ազգային հեղափոխական ճակատ» շարժման հետ, որը ձգտում է ինքնուրույն պետություն ստեղծել երկրի հարավային մի քանի նահանգներում:

Համաձայնագրի մանրամասնությունները չեն հրապարակվում: Անվտանգության ազգային խորհրդի գլխավոր քարտուղար Պարադորն Պատսանատաբուտրը փաստաթղթի ստորագրումից առաջ ընդգծել էր, որ համաձայնագիրը դեռ չի երաշխավորում հարավային նահանգների խաղաղությունը: Անջատականների ներկայացուցիչը՝ Մալայզիայում «Ազգային հեղափոխական ճակատի» բաժանմունքի ղեկավար Հասան Թաիբը, իր հերթին ասել էր, որ կազմակերպությունը հնարավոր ամեն ինչ կանի փոխզիջման հասնելու համար եւ պատրաստ է հանուն դրա համագործակցել իշխանությունների հետ:

Թաիլանդի զինվորական շրջանակների աղբյուրներից մեկը նախազգուշացրել է, որ համաձայնագրի ստորագրումից հետո երկրի հարավում բռնարարքները դժվար թե դադարեն: Նրա խոսքերով՝ «Ազգային հեղափոխական ճակատը» վերահսկում է ապստամբական ոչ բոլոր խմբավորումները: Անվտանգության խորհրդի ղեկավար Պատսանատաբուտրը այս կապակցությամբ նշել է, որ իշխանությունները կշարունակեն բանակցությունները նաեւ մյուս անջատական կազմակերպությունների հետ:

Զինվորականների տվյալների համաձայն՝ երկրի հարավում գործում են մոտ 9 հազար ապստամբներ: Առավելապես բուդդայական բնակչություն ունեցող Թաիլանդի դեմ մահմեդական անջատականների զինված պայքարը սկսվել է 2004 թվականին՝ ընդգրկելով Նարաթիվաթ, Պատսանի, Յալա նահանգները եւ մասամբ Սոնգքլա նահանգը, որոնք մինչեւ 1902 թվականը մտնում էին Մալայական իսլամական սուլթանության կազմի մեջ, իսկ հետո միացվեցին Թաիլանդին:

BBC-ի տվյալներով՝ 2004 թվականից մինչեւ օրս Թաիլանդի հարավում շարունակվող հակամարտության զոհերի թիվն անցել է 5 հազարից:

Սիրուն Երեցյանի անհատական ցուցահանդեսը Կալիֆոռնիայում

Մտասեւեռուն դեմքերը, հին սուրբ գրքերն եւ թթռուն կենդանիները մի քանիսն են այն պատկերների, որ ներկայացված են ճանաչված ամերիկահայ նկարչուհի Սիրուն Երեցյանի կտավներում, որոնք հունվարի 25-ին եւ 26-ին ցուցադրված էին Կանոգա պարկի (Կալիֆոռնիա) «ՀԲԸՄ-Ա-ՅԱ Նազարյան կենտրոնում», տեղեկացնում է ՀԲԸՄ-ի Նյույորքյան գրասենյակից ստացված հաղորդագրությունը:

ՀԲԸՄ-ի Լոս Անջելեսի մասնաճյուղի կազմակերպած ցուցահանդեսի ժամանակ հնչել են բազմաթիվ գովասանական խոսքեր նկարչուհու հասցեին: «Սիրունը ավելի քան 20 տարի է, ինչ մեր համայնքի անդամներից է եւ Գլենդեյլում «Ռոսլին» արվեստի պատկերասրահի սեփականատեր: Վաղամեռիկ ամուսնու՝ Հարութի հետ, որ ՀԲԸՄ-ի «Արտավազդ» թատրոնի հանձնախմբի անդամ էր, նվիրված են եղել արվեստին», նշել է ցուցահանդեսի կուրատոր եւ ՀԲԸՄ-ի լոսանջելեսյան մասնաճյուղի մշակութային ծրագրերի վարիչ **Մարալ Ոսկյանը**:

Սիրունի ոճը ինքնուրույն է, ոգեշնչված իր պատենական հայրենիքի, ծննդավայր Լիբանանի եւ ներկայիս բնակավայր Հարավային Կալիֆոռնիայի մոտիվներով: Կրթություն է ստացել Բեյրութի ՀԲԸՄ-ի Դարուհի Հակոբյան վարժարանում, երաժշտանոցում, համալսարանական քոլեջում եւ վերջերս նաեւ Կալիֆոռնիայում արվեստի եւ դիզայնի Օսիս քոլեջում: Նրա մասին եգիպտահայ անվանի նկարիչ **Բյուզանդ Կոճամանյանն** ասել է. «Նա մեր օրերի Պիկասոն է»:

Ցուցահանդեսին ներկայացված կտավներից է եղել «Լուսավորում» շարքի «Այբուբենի շքեղությունը» նկարը:

Հանդիսության ընթացքում այցելուները բացի կտավներից, ծանոթացել են նաեւ Սիրունի հեղինակած երկու գրքերը, մեկը՝ տեսողական արվեստի, իսկ մյուսը՝ բանաստեղծությունների հավաքածու:

Նրա մասին հավելյալ տեղեկությունների համար այցելել «**www.seeroonart.com**» կայքը:

Հ. Ծ.

ՎիվաՍել-ՄՏՍ-ն բացահայտում է նորարարական մտածելակերպի գաղտնիքները

Հայաստանի ամերիկյան համալսարանի հրավերով ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** հանդիպել էր համալսարանի ուսանողների հետ եւ հանդես եկել բիզնես-նորարարությունների վերաբերյալ դասախոսությամբ:

Ռալֆ Յիրիկյանի ինտերակտիվ դասախոսության հիմքում ընկերության իրականացրած նորարարական նախագծերն էին: Յիրիկյանն իր դասախոսության ընթացքում անդրադարձավ ՎիվաՍել-ՄՏՍ-ի մարկետինգի մասնագետների մշակած եւ հաջողությամբ իրականացված նորարարական նախագծերին:

Դասախոսության ընթացքում Ռալֆ Յիրիկյանը նաեւ խոսեց ստեղծագործական մտածողությունը խթանող այնպիսի գործոններից, ինչպիսիք են արտադրողականության մշակույթը եւ սոցիալական ինստիտուտների դերը: ՎիվաՍել-ՄՏՍ-ի տնօրենը ներկայացրեց ընկերության ղեկավարման ընթացքում կուտակված փորձն ու կարեւոր դիտարկումներ այն մասին, թե ինչպես ընկերությանը հաջողվեց դառնալ հեռահաղորդակցության ոլորտի առաջատարը, անընդմեջ պահպանել իր նվաճած դիրքերն ու արձանագրել նոր հաջողություններ:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն դարձել է ինովացիոն մենեջմենտի ոլորտի առաջատարը՝ իր որդեգրած կորպորատիվ մշակույթը տարածելով տնտեսական դաշտում՝ ուսանողությանը հասանելի դարձնելով տարիների ընթացքում ընկերության կուտակած հարուստ փորձը: Կառավարման մշակույթը կարեւոր է թե՛ երկարաժամկետ զարգացման, եւ թե՛ առանձին ոլորտներում իրականացվող ծրագրերի արդյունավետության տեսակետից:

Ռալֆ Յիրիկյանն անդրադարձավ գործարար էթիկայից բխող առանցքային քայլերին, որոնք անհրաժեշտ են արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Յիրիկյանը ներկայացրեց ընկերության առանցքային արժեքները, ինչպես նաեւ խոսեց նորարարությունների դինամիկայի եւ աշխատանքում պատասխանատվության մասին:

«Ներառական մտածողության վրա հիմնված առողջ աշխատանքային միջավայրը, բարոյական նորմերով առաջնորդվելու պատրաստակամությունը, սահմանված նպատակներին հասնելու պատրաստակամությունը նորարարության անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են: Նորարարությանը նպաստող հիմնական գործոններն են հավատը սեփական ուժերի, ապագայի տեսլականի հանդեպ, ինչպես նաեւ ինքնավստահությունը», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրենը: «Նորարարությունը մտքի արգասիք է: Իսկ ի՞նչն է խոչընդոտում նորարարական մտածելակերպին՝ միօրինակությունն ու «քառանձավային» մտածելակերպը, որոնք պետք է հաղթահարվեն: Տեխնոլոգիաներն ու տարատեսակ տեխնոլոգիական մշակումները համեմատաբար ավելի հեշտ լուծելի խնդիրներ են, քանի որ նորարարական մտածողության արդյունք են: Առաջին քայլը, որ պետք է կատարի «բաց» եւ ներառական մտածելակերպ ունեցող ղեկավարը, նորարարական մտածողությունը խթանող միջավայրը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելն է իր ղեկավարած ընկերությունում»,- ասաց Ռալֆ Յիրիկյանը:

Մեկնարկային փուլում ՎիվաՍել-ՄՏՍ-ն կանգնած էր երկընտրանքի առաջ, այն է՝ ընտրություն կատարել զարգացման երկու տարբերակների միջեւ. ցանցի զարգացումն ու բիզնես-գործընթացների արդյունավետ կազմակերպման նպատակով Հայաստան հրավիրել հեռահաղորդակցության ոլորտի օտարերկրյա հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների մասնագետներին, թե ապավինել սեփական ներուժին՝ փորձ չունեցող, նորավարտ, բայց միաժամանակ՝ ստեղծագործական մտածելակերպով օժտված, գործին նվիրված եւ իրենց ուժերի հանդեպ հավատով լցված երիտասարդներին: Ընտրվեց երկրորդ տարբերակը, որն էլ, ինչպես երեւաց կարճ ժամանակ անց, միանգամայն ճիշտ որոշում էր:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մեկնարկում է Բրիտանական ֆիլմերի 11-րդ փառատոնը

Բրիտանական ֆիլմերի 11-րդ փառատոնն այս տարի կմեկնարկի մարտի 2-ից եւ կտեւի մինչեւ մարտի 11-ը:

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան 2013 թ. հռչակել է Ջրային համագործակցության միջազգային տարի, որին այս տարի միացել է նաեւ փառատոնը:

Բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա մարտի 2-ին՝ «Ակվարիում» ֆիլմով: Անդրեաս Առնոլդի այս ֆիլմը արժանացել է ժյուրիի մրցանակին Կաննի փառատոնում եւ BAFTA մրցանակին՝ որպես լավագույն բրիտանական ֆիլմ:

Բոլոր ֆիլմերը, որոնք կցուցադրվեն փառատոնի շրջանակում, հանրությունը հնարավորություն ունի դիտելու «Մոսկվա» եւ «Նաիրի» կինոթատրոններում:

Մարտի 2-ին Fish tank ֆիլմը, մարտի 3՝ Salmon fishing in the Yemen, մարտի 4՝ You've been trumped, մարտի 5՝ Black pound, մարտի 6՝ Grabbers, մարտի 7՝ The end of the line, մարտի 8՝ Village at the end of the world, մարտի 9՝ Tsunami: anatomy of a disaster, մարտի 10՝ Just do it, մարտի 11՝ Film+H2O: Ֆիլմերը անգլերեն լեզվով կցուցադրվեն ժամը 16:00, իսկ հայերեն տողատակերով՝ 18:00: Նշենք, որ վերջին տարիներին արտադրված բրիտանական ֆիլմերի այդ ցուցադրությունից բացի կազմակերպվելու են դասընթացներ եւ մրցույթներ:

Մարտի 11-15-ը ֆիլմերը կցուցադրվեն նաեւ ԵՊՀ-ում, ՀՊՏՀ-ում, ՀՄՊՀ-ում, ՀՊՃՀ-ում եւ Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Արեւիկ Սարիբեկյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանն ընդծեց. «Այս տարի փառատոնը կշրջի նաեւ երեք մարզերում՝ Աշտարակում, Հրազդանում եւ Գորիսում, ինչպես նաեւ զորամասերում: Ծրագրում ներկայացված են 9 ֆիլմ, որոնք հիմնականում նվիրված են ջրային թեմաներին»:

Անդրադառնալով Բրիտանական խորհրդի հայտարարած «Ֆիլմ+H2O» կինո-մրցույթին, Ա. Սարիբեկյանն ասաց. «Մրցույթի նպատակն է ֆիլմի միջոցով բարձրաձայնել հասարակությունում ջրի հետ կապված առկա խնդիրները: «Ֆիլմ+H2O» կինոմրցույթին ներկայացված ֆիլմերից ութը համապատասխանել են ներկայացված պահանջներին, որոնք տեղադրված են Յութուբում եւ մեր պաշտոնական կայքում: Հանրությունը հնարավորություն կունենա դիտելու դրանք եւ ընտրելու լավագույնը: Այն ֆիլմը, որը կհավաքի ամենաշատ ձայնը, կստանա հատուկ մրցանակ: Ինչպես նաեւ առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերի համար կտրվեն մրցանակներ»:

Նշենք, որ մրցութային ֆիլմերը կցուցադրվեն նաեւ Գաֆեսճյան արվեստի կենտրոնում, որտեղ էլ Բրիտանական խորհուրդն ու ԱրմենՏել ՓԲԸ-ն կպարգեւատրեն լավագույն հեղինակներին:

Իսկ Թոմմո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում կցուցադրվի Ալֆրեդ Հիչքոքի «Կենվորը» ֆիլմը՝ փառատոնի հետահայաց խորագրի ներքո, որից հետո տեղի կունենա քննարկում եւ վարպետաց դաս, որը կվարի կինոքննադատ Յան Հեյդն Սմիթը:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան **Ջոնաթան Էյվսը** նկատեց, որ յուրաքանչյուր տարի փառատոնը էլ ավելի լավն է դառնում, սակայն այս տարին յուրահատուկ է թեմատիկ առումով. «Շատ կարեւոր է, որ երկրագնդի յուրաքանչյուր բնակիչ կարողանա օգտագործել մաքուր ջուր: Իսկ այժմ կան երկրներ, որտեղ ջուրը կարող է կոնֆլիկտների առիթ հանդիսանալ: Եթե փառատոնը կարողանա ուշադրությունը սեւեռել ջրային այդ խնդրի վրա՝ որպես համագործակցության եւ զարգացման հնարավորություն, ինչպես նաեւ ջուրն արդար բաշխված լինի բնակչության շրջանում եւ մենք կարողանանք խուսափել կոնֆլիկտներից, ապա դա հրաշալի կլինի»,- եւ ավելացրեց. «Ինձ դուր է գալիս նաեւ փառատոնի ծրագիրը, որը բացի ֆիլմերի ցուցադրումից, բազմաթիվ այլ ծրագրեր է իրականացնում»:

Ընդգծենք, որ փառատոնի հատուկ հյուրն է Միացյալ Թագավորությունից Յան Հեյդն Սմիթը, որ 2007-ից Միջազգային կինոուղեցույցի (International Film Guide) խմբագիրն է: Գրել է բազմաթիվ հրատարակությունների համար, հաճախ հանդես է եկել հեռուստատեսությամբ եւ ռադիոյով: Reuter's լրատվական գործակալությունում 11 տարի աշխատելուց հետո 2006-ից սկսյալ ազատ հեղինակ եւ խմբագիր է եղել: Գրել է Time Out, Vertigo, Electric Sheep եւ Sight and Sound պարբերականների համար: Նաեւ «24 կադր» շարքի (24 Frames) խմբագիրն է: Համադրում եւ վարում է The Screen Salon-ը, որն ամսական կինոֆորում է Լոնդոնի կինոթատրոններում եւ հանդիսատեսներին կինոմշակույթն ուսումնասիրելու առիթ է ընձեռում:

Նշենք, որ Յան Հեյդն Սմիթը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի աջակցությամբ մարտի 3-11-ը կանցկացնի կինոգրախոսականի դասընթաց:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Վրաց նկարիչների աշխատանքների ցուցահանդես «Հայարտանը»

Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում փետրվարի 23-ին բացվեց ժամանակակից վրաց նկարիչների աշխատանքների ցուցահանդեսը: Այն համատեղ կազմակերպել էին Վրաստանի հայ նկարիչների միությունը եւ Վրաստանի նկարիչների միությունը՝ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աջակցությամբ: Ցուցասրահում ներկայացվել էին վրաց գեղանկարչության ճանաչված նկարիչների շուրջ 4 տասնյակի հասնող կտավներ: Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Վրաստանում ՀՀ դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Կովկասի մուսուլմանների շեյխ Ուլ Իսլամ Փաշազադեի ներկայացուցիչը Վրաստանում՝ Ախունդ Ալի Ալիեւը, Վրաստանի մշակույթի նախարարի խորհրդական Յուրի Մեչիտովը, վրացի եւ հայ ճանաչված նկարիչներ, արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

Բացելով ցուցահանդեսը՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը արժեւորեց հայ-վրացական բարեկամությանը միսված համատեղ նման միջոցառումների կազմակերպումը:

Այնուհետեւ Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ **Մերուժան Շահումյանը** հանգամանալից ներկայացրեց ցուցահանդեսին մասնակցող վրաց նկարիչներին:

Ցուցահանդեսի բացումը ողջունեցին Վրաստանի նկարիչների միության նախագահ Գուրամ Ցերցվաձեն, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, նկարիչ Ջոնանի Վեփխվաձեն:

Օրհնության եւ գնահատանքի իր խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը խոսեց Թբիլիսիի այն գեղարվեստական անկրկնելի կոլորիտի մասին, որը ներդաշնակվելով բնատուր տաղանդին, աշխարհին տվել է Նիկո Փիրոսմանի, Լադո Գուդիաշվիլի, Գեւորգ Բաշինջաղյան, Ալեքսանդր Բաժբեուկ Մելիքյան, Գայանե Խաչատրյան հանճարներին եւ ներկաներին հորդորեց իրենց ավանդն ունենալ հայ-վրացական բարեկամության ոսկե կամրջի զարգացմանը:

Ժամանակակից վրաց նկարիչների աշխատանքների ցուցահանդեսը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում կշարունակվի մինչեւ մարտի 7-ը:

Վարդան Մինասյան. «Անկախ ամեն ինչից, ձգտելու ենք հասնել դրական արդյունքի»

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մոտ երկու շաբաթ Անթալիայում էր, որտեղ հետեւում էր ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան այն ակումբների մարզական հավաքներին եւ հանդիպումներին, որտեղ հանդես են գալիս Հայաստանի ազգային հավաքականի թեկնածու ֆուտբոլիստներ:

ՀՖՖ պաշտոնական կայքի հետ զրույցում Վարդան Մինասյանը խոսել է իր դիտարկումների մասին:

Դիտել եմ հայկական 4 ակումբների՝ «Փյունիկի», «Շիրակի», «Գանձասարի», «Ուլիսի» մարզական հավաքներն ու անցկացրած հանդիպումները, ինչպես նաեւ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստների մասնակցությամբ «Կուբանի», «Շերիֆի», «Ակտոբեի», «Վոլգայի», «Գովերլայի» հանդիպումները: Մեր բոլոր ֆուտբոլիստներն էլ նորմալ մարզավիճակում էին: Ուրախալի է, որ Ռոբերտ Արզումանյանը մշտապես խաղում է իր թիմի հիմնական կազմում, ինչը շատ կարեւոր է մեր համար:

Դիտել եմ նաեւ Տաշքենդի «Պախտակորի» մասնակցությամբ հանդիպումներ, որտեղ խաղում է Ժորա Հովհաննիսյանը: Ընդհանուր առմամբ, նա վատ տպավորություն չթողեց, բայց քանի որ նա խաղում է ենթահարձակվողի դիրքում, իսկ մենք այդ դիրքի համար ունենք ընտրության լայն հնարավորություն, կոնկրետ Չեխիայի հավաքականի հետ խաղի նախապատրաստական հավաքին նա չի հրավիրվի: Այդուհանդերձ, «Պախտակորը» ուժեղ թիմ է, Ժորան մշտապես խաղում է թիմի հիմնական կազմում եւ իմ խնդրանքով ուզբեկական ակումբի մարզական տնօրենը մեզ է տրամադրել ինչպես թիմի հետագա խաղերի ամբողջական խաղացանկը, այնպես էլ Ժորա Հովհաննիսյանի մասնակցությամբ խաղերի տեսագրությունները, որոնք մենք կդիտենք եւ նրան մշտապես կպահենք մեր տեսադաշտում: Հնարավոր է՝ ապագայում նրան էլ հրավիրենք ազգային հավաքական:

Իմ խնդրանքով հավաքականի թեկնածուներից Միխայիլ Մարկոսովի խաղին հետեւել է «Միկայի» մարզիչ Արամ Ոսկանյանը, որը դիտել է նրա մասնակցությամբ 2 հանդիպում: Կարծիքը դրական է, բայց ես պատրաստվում եմ հնարավորության դեպքում անպայման դիտել Ռուսաստանի առաջնության մոտակա հանդիպումը՝ նրա մասնակցությամբ:

Ընդհանուր առմամբ, այն դիրքերի համար, որտեղ մենք ունենք խնդիրներ, ես չտեսա հավաքականի համար արժանի նոր ֆուտբոլիստներ: Թիմերի կազմերում կան հեռանկարային երիտասարդ ֆուտբոլիստներ, բայց նրանք դեռ պատրաստ չեն ազգային հավաքականում խաղալու: Ընդհանրապես, հիմա ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ մենք ստիպված ենք մոտակա հավաքին հրավիրել հնարավորինս շատ ֆուտբոլիստներ: Միայն բոլոր խաղացողներին փորձարկելով եւ իրար հետ համեմատելով մենք կկարողանանք ճիշտ ընտրություն կատարել: Չնայած հավաքականի կազմի հետ կապված բազմաթիվ խնդիրներին, միեւնույն է, ձգտելու ենք հնարավորինս հաջող հանդես գալ Չեխիայի հավաքականի դեմ եւ հասնել դրական արդյունքի:

Ճապոնիայի գեղասահորդներն օլիմպիական խաղերին կնախապատրաստվեն Երեւանում

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեում հյուրընկալվել են Ճապոնիայի գեղասահքի ֆեդերացիայի նախագահ Հեդեիսո Իտոն եւ այդ կազմակերպության մենեջեր Տացուրո Մացումուրան: Նրանց Հայաստան էր ուղեկցել մեր անվանի նախկին մարզիչներից մեկը՝ Արարատ Զաքարյանը, որն այժմ բնակվում եւ աշխատում է Մոսկվայում:

Հյուրերը եղել են Ծիծեռնակաբերդում, ծաղկեպսակ դրել Եղեռնի զոհերի հուշահամալիրում, ապա այցելել են Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, մանրամասն ուսումնասիրել են սահադաշտը եւ մեծ տպավորություն ստացել: Նրանց հաճելիորեն զարմացրել է սահադաշտի որակը եւ մանավանդ «արագ սառույցը»:

Առաջիկայում Ճապոնիան մարզաձեւի մեծ պատվիրակություն կուղարկի Հայաստան: Գեղասահորդներից բացի Երեւան կժամանեն նաեւ մարզական գիտաբժշկական խմբեր եւ լրագրողներ: Նրանց կարծիքով Հայաստանի կլիմայական պայմանները շատ հարմար են Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար: Կարեւորում են եւ այն, որ ընդամենը 1-1,5 ժամում Երեւանից կարող են հասնել ձմեռային օլիմպիական խաղերի մայրաքաղաք:

ՀԱՕԿ-ի բաժնի վարիչ Գաբրիել Ղազարյանը հյուրերին հավաստիացրեց, որ օլիմպիական կոմիտեի ղեկավարությունը կաջակցի եւ կնպաստի Ճապոնիայի մարզիկների պարապմունքները լավագույն ձեւով կազմակերպելուն: Ինչ խոսք, ճապոնացի հեղինակավոր մարզիկ-մարզուհիների հետ կպարապեն նաեւ Հայաստանի առաջատար եւ հեռանկարային գեղասահորդները:

«Էմիրայթսում» կկանգնեցվի Բերգկամպի արձանը

Լոնդոնի «Արսենալը» որոշել է արժանին մատուցել Դենիս Բերգկամպին, որը մեծ ավանդ ունի ակումբի նվաճումներում: Ակումբի ղեկավարության որոշմամբ «Էմիրայթս» մարզադաշտի տարածքում կկանգնեցվի Բերգկամպի արձանը, որի նախնական տարբերակն արդեն պատրաստ է: Արձանի բացումը նախատեսվում է 2013/14-ի մրցաշրջանի շեմին: Նշենք, որ «Էմիրայթսում» արդեն տեղադրված են «Արսենալի» նախկին լեգենդար ֆուտբոլիստներ Հերբերտ Չեպմենի, Թոնի Ադամսի եւ Թյերի Անրիի արձանները:

Դենիս Բերգկամպը Լոնդոնի «Արսենալում» 11 մրցաշրջան է խաղացել՝ թիմի կազմում արժանանալով 11 տիտղոսների: Նա «Արսենալում» անցկացրած 423 խաղում 120 գոլ է խփել:

«Վասկո դա Գաման» Ռոմարիոյին 9 մլն դոլար կվճարի

Բրազիլացի հանրահայտ նախկին ֆուտբոլիստ Ռոմարիոն շահել է դատական հայցն ընդդեմ իր նախկին ակումբ «Վասկո դա Գամայի»: Դատական այդ գործընթացը սկսվել էր դեռեւս 8 տարի առաջ: Ռոմարիոն ակումբից պահանջել էր իրեն հասանելիք 29 մլն դոլարի պարտքը: Սակայն դատարանի որոշմամբ «Վասկո դա Գաման» ֆուտբոլիստին պետք է 9 մլն դոլար վճարի: Գումարի վճարումը կսկսվի 2014-ի հունվարից եւ կտեւի 10 տարի:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայ հրաձիգներն արժանացան բրոնզե մեդալի

Դանիայում ընթացող հրաձգության Եվրոպայի առաջնության մեկնարկը հաջող էր Հայաստանի հավաքականի համար: Օդամուղ հրաձգության երիտասարդների տարիքային խմբում վազող թիրախ 10 մ խառը վազք մրցաձեւում Հայաստանի հավաքականը թիմային հաշվարկով 1043 միավորով արժանացավ բրոնզե մեդալի: Մեր թիմի կազմում հանդես եկան Ռազմիկ Մինասյանը, Շանթ Սարգսյանն ու Արթուր Պետրոսյանը: Չեմպիոնի կոչմանն արժանացավ Ուկրաինայի հավաքականը, 2-րդը Ֆինլանդիայի հրաձիգներն էին:

Այդ մրցաձեւի անհատական մրցումներում Ռազմիկ Մինասյանը 361 միավորով 16 մասնակիցների մեջ գրավեց 7-րդ տեղը: Շանթ Սարգսյանը 342 միավորով 14-րդն էր, իսկ Արթուր Պետրոսյանը՝ 15-րդը (340 միավոր):

Նույն մրցաձեւի աղջիկների մրցումներին Հայաստանը ներկայացրած Լիլիթ Մկրտչյանը 334 միավորով 13 մարզուհիների պայքարում զբաղեցրեց 11-րդ հորիզոնականը:

Օդամղիչ հրացանով հրաձգությունում Սվետլանա Տիգրանյանը 407,2 միավորով 73 մարզուհիների մրցավեճում զբաղեցրեց 45-րդ տեղը:

Յուրա Մովսիսյանի հաղթական գոլերը

Իսպանիայում ուսումնամարզական հավաք անցկացնող Մոսկվայի «Սպարտակը» Յուրա Մովսիսյանի խփած 2 գոլերի շնորհիվ 2-0 հաշվով պարտության է մատնել նորվեգական «Ռուսենբորգին»: Վնասվածքից ապաքինվելուց հետո Մովսիսյանն առաջին անգամ մասնակցեց ստուգողական հանդիպման: Հաջորդ խաղը «Սպարտակը» կանցկացնի մարտի 3-ին նորվեգական «Մոլդեի» հետ:

Կարեն Գրիգորյանն առաջատարներից մեկն է

Ֆրանսիական Քափել լա Գրանդ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում առաջատարների միջեւ կայացած մրցախաղերն էին: Սամվել Տեր-Սահակյանի եւ Տիգրան Ղարամյանի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Իսկ ահա Կարեն Գրիգորյանը սպիտակներով հաղթեց Միխայիլ Գուրեւիչին ու վաստակեց 5 միավոր: Նա 9 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: Սամվել Տեր-Սահակյանն ու Տիգրան Ղարամյանն ունեն 4,5-ական միավոր: Նույնպիսի արդյունքի է հասել Էլինա Դանիելյանը՝ սեւերով հաղթելով Ալեքսանդր Զուբարեւին:

6-րդ տուրը հաջող էր նաեւ Ռոբերտ Աղասարյանի, Հովհաննես Գաբուզյանի եւ Կարինա Համբարձումովայի համար, որոնք հաղթելով մրցակիցներին, վաստակեցին 4-ական միավոր: Նույնպիսի արդյունք ունի Դավիթ Հարությունյանը, որը ոչ-ոքի խաղաց Կենի Սոլոմոնի հետ: 3 միավոր ունեցող Եվգենիա Դոլուխանովան հաշտություն կնքեց Օլավ Սեթի հետ:

Պապիկյանը պայմանագիր կնքեց «Սպարտակի» հետ

Հայաստանի երիտասարդական հավաքականի եւ լեհական «Լոձի» կիսապաշտպան Աղվան Պապիկյանը մինչեւ մրցաշրջանի ավարտը պայմանագիր է կնքել Մոսկվայի «Սպարտակի» հետ: Նա հանդես կգա վարձավճարով: «Սպարտակը» Պապիկյանին հայտավորել է պրեմիեր լիգայի մրցաշարում հանդես գալու համար: Հայ ֆուտբոլիստը կարող է խաղալ ինչպես «Սպարտակի» հիմնական, այնպես էլ երիտասարդական թիմի կազմում: Նա կխաղա 94 համարի մարզաշապիկով:

Հաղթողը որոշվեց

Իրանի շախմատի մրցաշարի 10-րդ տուրում Արմինե Բաբայանը հաղթեց Ակբար Կազեմիին, իսկ Սարգիս Մանուկյանը հաշտություն կնքեց Արիան Ղոլամիի հետ: Մանուկյանը 6,5 միավորով 27-րդ տեղում է, իսկ Բաբայանը 6 միավորով հանգրվանել է 38-րդ հորիզոնականում:

Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ 9,5 միավորով հաղթող ճանաչվեց իրանցի Օմիդ Նորոզին, որը սեւերով հաղթեց իր հիմնական մրցակից Շոթա Ազալաձեին: 8-ական միավորով 2-րդ եւ 3-րդ տեղերում են լիտվացի Վիրգինյուս Գրաբլիաուսկասը եւ իրանցի Մորթեզ Մահջոբը:

«Շիրակը» պայմանագիր կնքեց 4 ֆուտբոլիստի հետ

Ավարտելով ուսումնամարզական հավաքն Անթալիայում, «Շիրակը» վերադարձել է Հայաստան: Հավաքի ընթացքում գյումրեցիները ստուգողական 4 խաղ անցկացրին՝ կրելով մեկ պարտություն, մեկ խաղում հաղթելով եւ 2-ն ավարտելով ոչ-ոքի: Այդ հանդիպումների ընթացքում առաջնության առաջատարի կազմում փորձարկվեցին մի քանի ֆուտբոլիստներ, որոնց խաղային ունակությունների մասին մարզիչները վերջնական կարծիք կազմեցին:

Թիմի գլխավոր մարզիչ Վարդան Բիչախչյանը հրաժարվել է նիգերիացի հարձակվող Պրինց Նակեի ծառայություններից, իսկ ահա մյուս լեգեոնականներ, գանացի 21-ամյա պաշտպան Սամուել Կյերեի, բենինացի 20-ամյա հարձակվող Զորջ Օդիամբոյի հետ «Շիրակը» մինչեւ 2016-ի հունիսի 31-ը պայմանագիր է կնքել: Ակումբի հետ 4,5 տարվա պայմանագիր են կնքել 19-ամյա պաշտպան Դավիթ Մարիկյանը եւ «Շիրակ-2-ի» 17-ամյա հարձակվող Արամ Մուրադյանը:

«Շիրակը» ներկայումս մարզվում է Իջեւանի «Արնար» մարզադաշտում, որտեղ էլ մարտի 3-ին ՀՀ գավաթի քառորդ եզրափակիչ խաղում կհյուրընկալի «Արարատին»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքով

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՒՍՏՈՒՄ

Կրկին ատամնաբուժական ծառայությունների հարկման մասին

Ինչն է մերժել եւ ինչը փոխել կառավարությունն այստեղ

Կառավարությունը երեկ կրկին անդրադարձել է ատամնաբուժական ծառայությունների արտոնագրային վճարներին՝ բացասական եզրակացություն տալով ԱԺ պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Վահան Հովհաննիսյանի, Աղվան Վարդանյանի եւ Արմեն Ռուսամյանի՝ օրենսդրական փոփոխությունների առաջարկին:

Ինչպես նշեց ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը**, մանկական ատամնաբուժական գործունեության մասով արտոնագրային վճարի մեծությունը կիսով չափ նվազեցնելը անընդունելի է, քանի որ որեւէ օրենսդրական արգելք կամ սահմանափակում չկա, որը կարող էր երաշխավորել, որ մանկական ատամնաբուժական կլինիկայում ատամնաբուժական ծառայություններ են մատուցվում բացառապես մանկահասակներին:

ԱԺ պատգամավորների մյուս առաջարկը արտոնագրային վճարի հաշվարկումն է ոչ թե բազկաթոռների թվաքանակի, այլ ատամնաբույժների թվաքանակի հիման վրա: Դա եւս կառավարության կողմից չի ընդունվել, քանի որ առաջարկության ընդունումը կհանգեցնի հարկային բեռի ոչ արդարացի վերաբաշխումների բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, միեւնույն ատամնաբուժական կլինիկայում բժիշկ-ստոմատոլոգը միեւնույն ատամնաբուժական բազկաթոռի վրա աշխատում է ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մեկ այլ բժիշկ-ստոմատոլոգ աշխատանքային օրվա ընթացքում աշխատում է ընդամենը մի քանի ժամ՝ բազկաթոռը տրամադրելով հաջորդ հերթափոխի բժիշկ-ստոմատոլոգին: Կստացվի, որ երկրորդ բժիշկ-ստոմատոլոգը, որը այլ 2-ից 3 անգամ քիչ աշխատանք է կատարում եւ ավելի քիչ եկամուտ է ստեղծում, պետք է վճարի նույնքան արտոնագրային վճար, որքան առաջին բժիշկ-ստոմատոլոգը:

Ինչ վերաբերում է ատամնատեխնիկական ու ռենտգենաբանական ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների հարկմանը, ապա կառավարությունն արդեն ներառել է ռենտգենաբանական ծառայությունները ստոմատոլոգիական ծառայությունների մեջ: Իսկ ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման ընթացքում ատամնատեխնիկի 1 հիմնական աշխատատեղ է համարվել 1 ատամնատեխնիկի եւ մինչեւ 2 օժանդակ աշխատակիցների աշխատատեղերի ամբողջությունը:

Ա. Մ.

Մարտի 2-ին Ռաֆֆին կտա «բոլոր հարցերի» պատասխանը

1-ին էջից

Անահիտ Բախչյանը հիշեցրեց քաղաքական սպանությունները, որոնք տեղի են ունեցել երեք նախագահների օրոք, հավելելով, որ նման բան չպետք է կրկնվի, ու Հայաստանը պետք է դառնա օրենքի երկիր:

Քաղաքացիական եւ մարդկային պարտքից ելնելով՝ Ստեփանակերտից Երեւան է եկել ԼՂՀ ԱԺ պատգամավոր **Վահան Բադասյանը**: Նա կոչ արեց համախմբվել եւ միանալ հայրենիքի փրկությանը, քանի որ «Բարեւի» հեղափոխության մեկնարկը տրված է ոչ միայն Հայաստանում, այլեւ Փարիզում, Լոս Անջելեսում եւ Նյու Յորքում: Իսկ մոտակա օրերին բողոքի ակցիաներ կանցկացվեն նաեւ եվրոպական այլ քաղաքներում:

«Ես քաղաքական գործիչ չեմ ու չեմ կարող վերլուծություններ կատարել, ես նաեւ գիտակցում եմ, որ դժբախտություն է, երբ արվեստի մարդը մտնում է քաղաքականություն կամ հակառակն է տեղի ունենում, սակայն պահն է թելադրում», Ազատության հրապարակից երեկ հայտարարեց Փարիզից ժամանած դերասան **Վարդան Պետրոսյանը**: Դերասանը խոստովանում է, որ չէր հավատում ժողովրդի ակտիվությանը: «Կարծում էի՝ ժողովուրդն անտարբեր է, հիասթափված, եւ այլեւս ոչնչի չի հավատում: Բայց ես սխալվում էի: Ժողովուրդը ոտքի կանգնեց: Ոտքի կանգնեց հենց արցախյան շարժման 25-ամյակի օրերին: Շարժումը նշվում է շարժմամբ, եւ շարժմամբ ենք մտադրվում: Սա ինքնամտրման շարժում է եւ հաղթանակի սկիզբն է: Ես վստահ եմ, որ մարտի մեկ չի լինելու, բռնություն չի լինելու, հավատացե՛ք, որ հաղթանակ լինելու է, քանի որ շարժումը դեգրադացնել ու կասեցնել ցանկացողները չեն հասկանում, թե ինչ է կատարվում եւ ինչ պետք է անեն»:

Իր ելույթը Ռաֆֆին սկսեց սումգայիթյան զոհերի հիշատակը հարգելու մեկ րոպե լռությամբ: «Նրանք ովքեր չեն հասկացել իմ խոսքերը, կրկնում եմ՝ այլեւս ոչ մի «զադնայա սկորոս»: Ով ճնշի ուսանողին, ով սպառնա աշխատանքից հեռացնելով կամ այլ ճմշումներով, պետք է դատապարտվի եւ արժանանա ժողովրդի դատավարությանը: Կուսակցականացված են ռեկտորատներն ու ուսխորհուրդները: Մեր կրթությունն օգտագործում են կուսակցականացման համար: Նախ եւ առաջ կուսակցականացված է համալսարանը, եւ ՀՀ երրորդ նախագահը պետք է դուրս գա համալսարանից: Ապրիլի 9-ից նա այլեւս գործող նախագահ չէ, եւ մենք միասին կքննարկենք՝ եթե նա հարմար թեկնածու է, ապա կմնա ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի պատասխանում: Նա պետք է առաջինն օրինակ ծառայի՝ ինքնաբացարկ հայտնի ԵՊՀ-ից, հետո՝ Բաղրամյան 26-ից: Նրա օրինակին պետք է հետեւեն մարզպետներն ու գյուղապետները, ովքեր փետրվարի 18-ին սպառնացել են, ճնշել ու կեղծել են ընտրությունները: Լիսկայից սկսած մինչեւ ամենավերջին գյուղապետը: Նրանք պետք է ժողովրդին պատասխան տան»:

Հովհաննիսյանն ասաց, որ բոլոր հարցերը մտադիր է քննարկել ժողովրդի հետ: Նա հավելեց, որ կլինեն հարցեր, որոնց շուրջը, գուցե ծագի անհամաձայնություն: «Այդ ժամանակ ես կիջնեմ ձեզ մոտ եւ, ինչպես հավասարը հավասարի, կքննարկենք հարցերը: Առողջ բանավեճով մենք պետք է գանք դեպի հաղթանակ: Դուք պատրա՞ստ եք ինձ հետ պայքարել հանուն այդ հաղթանակի, եթե անգամ դրա համար պահանջվի մեկ ամիս կամ մեկ տարի», հարցրեց Ռաֆֆին ժողովրդին: Ժողովուրդն ասաց. «Այո՛, բայց մեկ տարին շատ է, մեկ ամսում հարցերը լուծենք»: Ռաֆֆին հավելեց, որ մինչեւ մարտի 2-ը ժամանակ ունեմ՝ դիմել Սահմանադրական դատարան, թե՝ ոչ:

Իսկ այսօր՝ ժամը 12-ին «Ժառանգության» առաջնորդը Ազատության հրապարակում մամուլի ասուլիս կհրավիրի, այնուհետեւ կմասնակցեն Մյասնիկյանի արձանի մոտ տեղի ունեցող երթին եւ կհարգեն մարտի մեկի 10 զոհերի հիշատակը, կհաջորդի հոգեհանգիստը Սուրբ Սարգիս եկեղեցում:

Իսկ մարտի 2-ին ժամը 5-ին Ազատության հրապարակում տեղի կունենա «Բարեւի հաղթահավք», որտեղ Ռաֆֆին խոստացավ տալ բոլոր հարցերի պատասխանն ու ներկայացնել մարտ ամսվա գործերի ծրագիրը:

«Մեգա Գալ Գրուպ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ			
Ոչ նյութական ակտիվներ	1	4584	4584
		4584	4584
Ընթացիկ ակտիվներ			
Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր		-	-
Կարճաժամկետ փոխառություններ		-	-
Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում	2	81	66
Ընդամենը ակտիվներ		4665	4650
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ			
Կապիտալ եւ պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	3	50	50
Կուտակված շահույթ		3007	3284
		3057	3334
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր			
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	4	1608	1316
Այլ կրեդիտորական պարտքեր			
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		4665	4650

Գ. Գրիգորյան
տնօրեն

«Մեգա Գալ Գրուպ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2011 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	5	30079	28121
Վաճառքի ինքնարժեք	6	(9274)	(10092)
Համախառն շահույթ/ վնաս		20805	18029
Բաշխման ծախսեր			-
Վարչական ծախսեր	7	(1732)	(1728)
Հաստատագրված վճարի գծով ծախս		(18750)	(16000)
Գործառնական այլ ծախսեր		(600)	
Տարվա զուտ շահույթ շարունակվող գործունեությունից		(277)	301
Ընդհատվող գործունեություն			
Տարվա շահույթ ընդհատվող գործունեությունից			
Տարվա շահույթ		(277)	301
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(277)	301

Գ. Գեւորգյան
տնօրեն

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները:

«Դարախան Փլեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ			
Ոչ նյութական ակտիվներ	1	2917	2917
		2917	2917
Ընթացիկ ակտիվներ			
Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր	2	62	20
Կարճաժամկետ փոխառություն	3	50	
Մնացորդ դրամարկղում	4	1	1
		113	21
Ընդամենը ակտիվներ		3030	2938
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ			
Կապիտալ եւ պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	5	50	50
Կուտակված շահույթ		2880	2324
		2930	2374
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր			
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	6	100	564
Այլ կրեդիտորական պարտքեր			
		100	564
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		3030	2938

Ա. Դարախանյան
տնօրեն

«Դարախան Փլեյ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2011 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	7	49464	48208
Վաճառքի ինքնարժեք	8	(14552)	(13922)
Համախառն շահույթ/ վնաս		34912	34286
Բաշխման ծախսեր		(12)	
Վարչական ծախսեր	9	(4214)	(2495)
Հաստատագրված վճարի գծով ծախս		(30000)	(29000)
Գործառնական այլ ծախսեր		(130)	(470)
Տարվա զուտ շահույթ շարունակվող գործունեությունից		556	2371
Ընդհատվող գործունեություն			
Տարվա շահույթ ընդհատվող գործունեությունից			
Տարվա շահույթ		556	2371
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		556	2371

Ա. Դարախանյան
տնօրեն

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները

«Փոտրիկ Քնարիկ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	1	8750	8333
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ			
ԱԱՀ-ի գծով դեբիտորական պարտքեր			
Շահութահարկի գծով նվազագույն վճարումներ			
		8750	8333
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ			
Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր	2	132	44
Դեբիտորական պարտք սոց. վճարի գծով		10	
Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում		11	94
		153	138
Ընդամենը ակտիվներ		8903	8471
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ			
Կապիտալ եւ պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	3	50	50
Լրացուցիչ կապիտալ			
Կուտակված վնաս		3357	3920
		3407	3970
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր եւ փոխառություններ		-	-
Պահուստներ		-	-
		-	-
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր եւ փոխառություններ			
Պահուստներ			
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	4	5376	4413
Կրեդիտորական պարտքեր սոց. վճարի գծով			88
Այլ կրեդիտորական պարտքեր		120	
		5496	4501
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ		8903	8471

Է. Հովհաննիսյան տնօրեն

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները

«Փոտրիկ Քնարիկ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2012 թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2012 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի	2011 թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարի
Հասույթ	5	89262	78803
Վաճառքի ինքնարժեք	6	(21529)	22413
Համախառն շահույթ/ վնաս		67733	56390
Հաստատագրված վճարի գծով ծախս		(65745)	(52855)
Արտոնագրային վճարի գծով ծախս		(360)	
Վարչական ծախսեր	7	(2265)	(2084)
Իրացման ծախսեր		(18)	-
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝		(348)	(348)
Շահագործման մեջ չգտնվող խաղային ավտոմատների վարձակալական վճար		(348)	(348)
Գործառնական գործունեությունից շահույթ/ վնաս		(1003)	1103
Այլ ֆինանսական արդյունքներ		-	-
Շահույթ/ ծախս մինչեւ հարկերը		(1003)	1103
Տարվա շահույթ/ վնաս		(1003)	1103

Է. Հովհաննիսյան տնօրեն

Այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են կազմում ներկայացված կից ծանոթագրությունները

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 28.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: